

99-82  
-16

3937

491.99-8  
力-16  
A.D. 1993

2010

42002

61 - 2 }  
62 - 2 }

491.99-8

б-16

УРС

Հրատարակութ. Կովկաս. գրավաճառանոցի—Զաքարիայ Գրիգորեանց

428  
133-84

# ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

87-18

Կ ա զ մ ե ց  
Յ. ՃԱՂԱՐԲԵԳԵԱՆ

ԹԻՖԼԻՍ  
Տպարան Վ. Շարաձե || Տիպ. М. Шарадзе и К°.  
Ник. ул. № 21.  
1895




13810

138  
18-881

# ԱՊՀԱԺ ՑԱՅԾ

Дозволено цензурою. Тифлисъ. 8-го Мая 1895 года.



## ԶԱՆԱՍՍԵՐ ՄԱՆՈՒԿԸ

Զանասսէր մանուկը նստած էր լուսամտի առաջ,  
դաս էր սովորում։ Փայլուն արևը նրա գրքի վրայ  
ընկնելով՝ դուրս էր հրաւիրում նրան տաելով։

— Սիրուն երեխայ, բաւական է, քիչ կարդա.  
դներս եկ, մի քիչ էլ խաղա։

Մանուկը պատասխանեց.

— Ոչ, պայծառ արեկիկ, ես հիմա չեմ կարող  
խաղալ. պէտք է դասերս պատրաստեմ։  
Եւ մանուկը շարունակեց իւր գործը։



Մի փոքրիկ և սիրուն թոշնակ թրթուալով ե-

կաւ, լուսամտի առաջ՝ ծառի վրայ կանգնեց և ծըլ-  
ւըլալով ասաց.

— Սիրնն երեխայ, հերիք է՝ որքան գրեցիր,  
դմւրս եկ, քիչ էլ երգիր ու խաղա:

Մանուկը պատասխանեց.

— Ո՞չ, սիրնն թռչնակ, ես դեռ չեմ կարող խա-  
ղալ ու երգել, պէտք է դասերս լաւ պատրաստեմ:



Մանուկը շարունակում է գրել ու կարդալ:  
Աշը բարձրացրեց, անուշիկ կեռասը տեսաւ: Դա էլ  
ասես փսփսում էր.

— Սիրնն մանկիկ, բաւական չէ ինչքան գրե-  
ցիր, արի, հասած հատիկներս կեր ու կշտացիր:

Իսկ մանուկը մտածում է. — Ի՞նչ ախորժակով  
կեռաս ուտեմ, քանի որ դասերս չեմ սովորել: 2է,  
դեռ բանս վերջացնեմ:

Մանուկը չխաբուեց, իւր գործն աւարտեց,  
դասերը լաւ պատրաստեց: Յետոյ վեր կացաւ, այ-  
դին վաղեց և համարձակ կանչեց.

— Այն մկ էր ինձ հրաւիրում. եկէք, հիմա ես  
պատրաստ եմ խաղալու և երգելու:

Այժմ արմն աւելի պայծառ էր փայլում. թըռչ-  
նակն աւելի անուշ էր երգում. և կեռասը նրան  
անշափ համեղ էր թւում:

### Ա Շ Ո Ւ Ե

Ով ցանել է,

Հնձում է.

Ով տնկել է,

Քաղում է:

Վախ չունի՝

Ով աշխատել է,

Հոգս չունի՝


Ով ժողովել է:

Կտրիչն աչք ունի՝

Կանաչ կարմրին,

Ծովն աչք ունի՝

Ցրտին ու սովին:



Ճ Պ Ո Ւ Ր Ն Ե Խ Մ Ը Չ Ի Ւ Ն

Ճպուռը երգում էր, ցատկում, ուրախ օրեք  
անց կացնում։ Ո՞չ պաշար էր պատրաստում, ոչ  
բոյն շինում։ Ճմեռուայ հոգս չէր քաշում։

Այսպէս անց կացաւ ամառը։ Ցուրտ քամիներ  
վեր կացան, տերեները թափուեցին, դաշտը խո-  
տից զրկուեցաւ։ Ճպուռը մէկ էլ այն տեսաւ, որ  
Ճմեռն է վրայ հասել։ Հաց չունէր, որ ուտէր, մի  
տաք տեղ չունէր, որ մէջը մտնէր։ Լոեց ճպուռը.  
ոչ երգումէր, ոչ ցատկում։

Նեղն ընկաւ խեղճը. սովից ու ցրտից քիչ  
էր մնում մեռնէր։ Զատ դէս ու դէն ընկաւ, վերջը  
մրջինի տունը գնաց, ասաց. — Սիրուն մրջին, ի  
սէր Աստծու՝ մի քիչ ապրուստ, մի տաք տեղ  
տուր ինձ, որ ցրտատար ու սովամահ շինիմ, մին-  
չև գարնան օրերին համնեմ։

Մրջինն ասաց. — Զարմանում եմ, բարեկամ,  
հապա անցած ամառն ինչ էիր անում։

— Խաղում էի և երգում. ուրիշ բանի ժամա-  
նակ չունէի։

— Խաղում ու երգում էիր հա. այդ էլ գէշ բան  
չէ. ուրեմն այժմ էլ պար եկ. էլ ինչու ես դռնէ  
դուռն ընկնել։

Առածներ. — Ով կաշխատի, նա կու-  
տի։ Ով կխաղայ, նա կկաղայ։ Աստուած  
ծեռք է տուել, որ բան անես։ Այօրուայ  
բանը վաղուան մի՛ թողնիր։ Վարդը սիրո-  
ղը փուշն էլ պիտի սիրէ։



Գ Ո Ւ Ր Ա Ն Ի Ե Ր Գ

Արի, գութան, վարի, գութան,  
Օքն եկել է, ճաշ գաւել.

Քաշիր, եղը, ուսիդ մատաղ,  
Քաշիր, քաշենք, վար անենք.

Ճիւտին արա, քշիր, հօտաղ,  
Մեր սև օրին ճար անենք:

Զեռքս դատարկ, ուժս հատած,  
Հազար ու մին ցաւի տէր,  
Ինձ են նայում մերկ ու սոված  
Մի տուն լիքը մանուկներ:

ԱՍՏԾՈՒ ՊԱՀԱԺ ԳԱՌԸ ԴԱՅԼԸ ԶԻ ՈՒՑԻԼ

Սասմայ քաղաքի իշխանը մեռաւ. մեռաւ և  
նրա կինը: Դրանց նորածին որդի Գաւիթը որք  
մնաց:

Մորամելիքը եկաւ, Սասմայ քաղաքի վրայ  
հարկ դրաւ, Դաւթին էլ վերցրեց, Մոլլ քաղաքը  
տարաւ:

Մորամելիքի մայրը Դաւթին կերակրեց, պա-  
հեց մինչև երեք տարի: Որ երեք տարեկան եղաւ,  
Գաւիթն ամեն օր գուրս էր գալիս, տասը, տաս-  
նուհինք տարեկան տղաների հետ խաղում:

Մորամելիքն ամեն օր գնում էր գուրզ խաղա-  
լու: Մի օր Դաւթին էլ հետը տարաւ: Գաշտի մէջ  
նրան ջոկ տեղ նստեցրեց. ինքն իւր ընկերների  
հետ գուրզ է խաղում: Հէնց որ Մորամելիքն իւր  
գուրզը զարկեց, Դաւթը վեր կացաւ, կանգնեց,  
ձեռը մեկնեց, նրա գուրզը բռնեց:

Նեղացաւ մելիքը, ասաց. — Սա դեռ փոքր է,  
այսպէս է, որ մեծանայ՝ ինչ կլինի. սրա ձեռքից  
ինձ պրծում չկայ:

Եւ մոքումը դրեց, որ Դաւթին սպանի:

Տուն եկաւ, մօրն ասաց. — Մայրիկ, այդ տը-  
ղային պէտք է սպանեմ. մարդկանց մէջ ինձ ամօ-  
թով արաւ:

— Ի՞նչ արաւ:

«Իմ գուրզը զարկեցի, դա վեր կացաւ, ձեռը  
մեկնեց, բռնեց:

— Է՞ն, ինչ անենք, երեխայ է, խելքը բան չի  
կտրում:

«Լաւ, փորձենք. մէկ սինի կրակ, մէկ սինի  
ոսկի բերենք, գնենք Դաւթի առջև: Թէ նա երե-  
խայ է, խելքը բան չի կտրում, ձեռը դէպի կրա-  
կը կտանի, չի տանիլ դէպի ոսկին:



Մէկ սինի կրակ, մէկ սինի ոսկի բերեն, գրին  
Դաւթի առջև: Դաւթը ձեռը մեկնեց, տանում էր  
դէպի ոսկին: Աստծու հրամանով երկնքից հրեշտակ  
իջաւ, շուռ տուաւ նրա ձեռքը, դէպի կրակը տարաւ:

Դաւթի մատն այրուեց, կրակ կվաւ մատին: Մատը  
լեզուին տարաւ, լեզուն էլ այրուեց: Որ լեզուն  
այրուեց, թլուատ դարձաւ. անունը մնաց թլոր-  
Դաւթիթ:

Մայրն ասաց.—Ճեսմբ, որդի, որ երեխայ է,  
խելքը բան չի կտրում:

Տէրն արին թափող եւ չար մնորդից  
զգում է: Տէրն արդարի պաշտպանն է:



Ա Շ Ո Ւ Ե

Գարունն անց է կացել,  
Անց կացաւ և տօֆտ ամառ.  
Յուրա քամիներ վեր կացան,  
Հեռու չեն ձիւն ու ձմեռ:

Գնա, սիրուն ծիծեռնակ,  
Զուր ես խաղում, թռչկոտում.  
Թող քո բոլնը շուտ, արագ,  
Յուրա ձմեռն է մօտենում:

Անցիր սարեր ու ձորեր,  
Գնա հարաւ՝ տաք երկիր.  
Գտիր այնտեղ քո հին բոյն,  
Ուրախ խաղա ու երգիր:

ՀՈՂԸ, ՕԴԸ, ԶՈՒՐԸ, ԱՐԵՒԸ

Արեգակը ջրին ասաց.—Ի՞նչ ես կատաղում,  
գոռում, փըրփրում: Աստուած է վկայ՝ իմ ոսկի  
մազերով քեզ այնպէս վերև կրաշեմ, երկինք կտա-  
նեմ, որ չոր գոգումդ բուլդ գգեն, բամբակ վարեն:

Ճուրը նրան պատասխանեց.—Գիտեմ, որ այդ  
ձեռքիցդ կգայ. բայց շատ էլ մի պարծենար. Աս-  
տուած է վկայ՝ իմ ջրի թողն այնպէս երեսովդ կը  
տամ, այնպէս ծուխ ու մուխ կանեմ, աչդ քոռաց-  
նեմ, որ աշխարհը մոռանայ՝ թէ արև կայ բարձր  
երկինքում:

Օդը ջրին վրայ բերեց.

— Գնա էլ ես շատ հպարտանում. Աստուած է  
վկայ՝ ուռած տիկս կրանամ, այնպէս կփշեմ, քեզ  
ցրիւ կտամ, որ ամեն մի թողդ աշխարհի մի  
ծայրը, մկան ու մրջիւնի ծակին ընկնի:

Հողը պլուսը բարձրացրեց, արկին, զրին և օպին ասաց.—Ի՞նչ էք իմ վախին կռւում, կըրկըռում։ դուք երեքդ էլ ինձ էք ծառայում։ ինչ անէք-շանէք աշխարհի վրայ՝ ողջ ինձ համար է, որ փորս կըշտանայ։

Ո՞րքան մեծ են Քո գործերը, ո՞վ Տէր։ Երկիրը լիքն է քո ստեղծուածներովը։ Դու տալիս ես նրանց, եւ նրանք հաւաքում են։ Դու քաց ես անում՝ Քո ձեռքը, նրանք կըշտանում են։

---

### ԴԱՒԹԻՆ ՈՒԶՈՒՄ ԵՆ ՍՊԱՆԵԼ

Մորամելիքը Դաւթին դէպի Սասմայ քաղաքն ուղարկեց. հետև էլ երկու քաջեր գրաւ, ասաց.—Տարէք, Մուրադ գետին որ հասնէք, կամրջի վրայ Դաւթի գլուխը կտրեցէք, գետը գցեցէք, արինն էլ ինձ մօտ բերէք։

Քաջերն առան Դաւթին, գնացին։ Դաւթը նրանց չի էլ լուսմ. լոր է տեսնում՝ բռնում է, նատաստակ է տեսնում՝ նոյնպէս։

Մուրադ գետին հասան, կամրջի վրայ քաջերը կամովնեցին, Դաւթին ասացին. — Դաւթ, վախիդարկիդ մատադ. վախենում ենք այստեղ քեզ մի փորձանք պատահի. եկ, առաջ քեզ անց կացնենք։

Ասաց.— 2է, մի վախենաք, գնացէք, ես ձեր յետեկից կդամ։

Նրանք ասացին.— 2է, մեզնից մէկն անցնի, մէկը յետե մ՞նայ, մէջ տեղից դռւ եկ։

Ասաց.— Լաւ, այդպէս լինի։

Հէնց որ Դաւթը կամրջի կէմն անցաւ, առցի մարդը յետ դարձաւ, յետեինն էլ վրայ հասաւ։ Դաւթին բռնեցին, որ սպանեն։ Դաւթն էր, մէկ ձեռը տարաւ մէկ մարդուն բռնեց, միւսն էլ մեկնեց՝ երկորդին ճանկեց, երկուսին էլ կամրջի վրայ վայր գցեց, զիբից դանակը հանեց, ուզում էր նըրանց մորթել։

Նրանք ասացին.— Մենք մեզ չունինք, Դաւթ։ Մորամելիքը մեր տէրն է. նա մեզ հրամայեց, թէ Դաւթին տարէք, սպանեցէք, գետը գցեցէք։

Խղճաց Դաւթը, բաց թողեց նրանց։

Նրանք էլ մի շուն սպանեցին, արինը Մորամելիքին տարան. ասացին. — Դաւթին սպանեցինք, գետը գցեցինք. այս էլ նրա արինը։

Զարիցը մի՛ յաղթուիր, բարութիւնով չարին յաղթիր։


Տէրն իւր սուրբ տաճարումն է. Տիրոջ աթոռը երկնքումն է. Նրա աշքերն ամեն ըստ տեսնում են։ Նա ամբարիշտների վրայ կրակ ու ծծումք է թափում։

---

b r q

Մսրակ քամին դալիս է,  
Թիկնամէջիս տալիս է.  
Ճամբայ տուէք, դուըս եկէք,  
Մեր Դաւիթը գալիս է:

Սարի լանջին կանաչ խոտ,  
Վարդ-մանիշակ անուշհոտ.  
Մեր Դաւիթը մեզ տուէք,  
Հագնենք կանաչ-կարմիր ճոփ:  
Դաւիթի կռները գերան,  
Թշնամիքը վայր դառան.  
Մսրակ Մելիք, ուե՛ մելիք,  
Հայիւներդ ջուր դառան:



q b s

Խոր և երկայն փոս է. Նրա միջով ջուր է վա-  
զում: Այդպիսի ջուրը գետ է ասում: Երեսներս  
դարձնենք դէպ այն կողմը, ուր գետի ջուրն է վա-  
զում. մեր աջ կողմը կլինի գետի աջ ափը, ձախ  
կողմը՝ ձախ ափը:

Գողմը ձախ ադր՝  
Գետի ջուրը գարունքին շատանում, ափերից  
դուրս է գալիս. դրա պատճառն այն է, որ այդ  
ժամանակ սարերի ձիները հալում են և շատ անձ-  
րին է գալիս:

ԴԱ Ե ՊԱՄՊԱ:  
Գետի ջուրը խմում ենք: Գետից համեղ ձկներ  
ենք որսում: Գետն է բանեցնում մեր ջրազայները:  
Մեծ գետերի վրայ լաստեր, մակոյիներ, նաւակիներ,  
մինչև անդամ նաւեր են լողում: Դրանք մի տեղից  
միւս տեղն են տանում մարդիկ և ապրանքներ:

ԱՐՁԼ ԵՀ ՄԵՇՈՒՆ

Անտառի խորքում մեղուն իր համար մի փուչ ծառի մէջ՝ ինչպէս փեթակում, մի բոյն էր շինել, մէջը ձագ հանել և անուշ մեղրով բճիճը լցրել:

Մի օր արջուկը առաւ այդ մեղրի անուշիկ հոտը. մըրթմըրթաց, փընթփընթաց, ծառնիվեր կանգնեց և թանթուլները ծառի մէջ կոլիեց:

Մեղուն տղտղաց, տղղացին ձագեր. արջը շրաշեց իր բրդոտ թաթեր, ողջ բոյնը քանդեց, ձագերը շարդեց, խորիսխը հանեց, լափեց, լափլսփեց:

Մեղուն որ աեսաւ իւր ձագուիներին այս անգութ արջի ոտքի տակ ճզմուած, գըռռաց, դռդռռաց, խայթեց արջի աչք և ինքն էլ անշունչ ընկաւ ծառի տակ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

— 17 — 7/1 1922

Ա. Ա. ԱՅԱԽՈՎԻ ԱՆԴՐԱ

Դաւիթը Սասմայ քաղաք եկաւ. նրա հօրեղբայրը՝ Զէնով-Յովանն ուրախացաւ, պուխը համբուրեց, փառք տուեց Աստծուն, փառք Անմահ Թագաւորին.—Մեր տղան եկաւ, իւր հօր տեղը կբռնի:

Բերաւ, պողպատի սոլ (կօշիկ) կարել տուաւ, պողպատի կոռ (ցուալ) շինել տուաւ, Դաւիթին գառնարած արաւ: Դաւիթը պողպատի սոլերն հագաւ, պողպատի կոռը ձեռքն առաւ, գառներն առջևն արեց, դաշտը տարաւ: Գառները թողեց դաշտին մէջ, այս ու այն կողմն ընկաւ, որքան նապաստակ, աղուէս, գայլ, տեսակ տեսակ կենդանիներ տեսաւ, քշեց, գառների հետ խառնեց, իրիկունը քաղաք բերաւ: Քաղաքացիք որ տեսան, վախեցան: Գառները փակեցին, դուրս չեկան:

Զէնով-Յովանը Դաւիթի մօտ գնաց: Նայեց, տեսաւ, այնքան ման է եկել, պողպատի սոլը մաշուել է, պողպատի կոռը կոտրտուել է: Հարցը եց, — Դաւիթ, ինչպէս ես:

Պատասխանեց.—Հօրեղբայր, այն սև գառները հանդարտ են, իսկ այն գորշերը անիծած են, ինձ շատ են չարչարում:

Հօրեղբայրն ասաց.—Գորշերի ետեից մի ընկնիր, որոնք հանդարտ են, նրանց բեր:

Քիչ յետոյ հօրեղբայրը Դաւիթին նախրորդ արաւ: Դաւիթը նախիրը քշեց, սարը գնաց: Որքան մեծ գաղաններ կային՝ առիւծ, վազր, արջ,

գայլ՝ կարծեց՝ թէ իրենն են, առջևն արեց, նախրի  
հետ խառնեց, քշեց դէպի քաղաք: Յովանը նայեց,  
տեսաւ՝ նախիրը գալիս է հեռուից, բայց այնքան  
տաւար չկայ, որքան գայլ, արջ, առիւծ ու վագր:  
Մունետիկն կանչեց, ասաց.— Զայն տուր, թող ա-  
մեն մարդ իւր դռներն ու երդիկները պնդի, քանի  
որ տաւարը չի եկել: Տաւարի հետ առիւծներ,  
վագրեր, գայլեր ու արջեր են գալիս: Թող դռներն  
ու երդիկները պնդեն, մինչև մուլթը կպատի, գա-  
զանները սարը կը քաշուեն, յետոյ քաղաքացիք ի-  
րանց տաւարը կտանեն, կգումեն:

Քաղաքացիք դռներ, երդիկներ պնդեցին. ոչ  
ոք դուրս չեկաւ: Դաւիթը եկաւ. քաղաքը գազան-  
ներով լցուեցաւ: Կանչեց Դաւիթն, ասաց.

— Բաց արէք ձեր դռներ, բաց արէք,

Ում մէկն էր՝ երկու եմ դարձել.

Ում երկուսն էր՝ արել եմ չորս,

Ում չորսն էր, արել եմ ութ...

Ոչ ոք դուրս բաց չարեց: Մուլթը վրայ հա-  
սաւ. գազանները ջոկուեցին, սարը քաշուեցին: Նոր  
քաղաքացիք իրանց տաւարը տարին:

Փ Ո Ք Ռ Ի Կ Ծ Ղ Ա Ն


Փոքրիկ տղան ծաղկանց միջին  
Վազվզում է, թուշկոտում.  
Եւ նախշունիկ թիթեռնիկին  
Նա բռնել է աշխատում:

Նա ուրախ է, նա խնդում է,  
Նա չի զգում յոգնութիւն.  
Եւ քրտինքը կաթկաթում է  
Նրա դէմքից շողշողուն:

Մ Ո Ւ Խ Ե Ց Ի Կ

Մինչև այսօր էլ գիւղերում ամեն մի կարգա-  
դրութիւն մունետիկների միջոցով է յայտնի դառ-  
նում ժողովրդին: Գաւառապետը կամ առաջնորդը  
մի հրաման են արձակել, մի կարգադրութիւն են  
արել, որ պէտք է ամբողջ գիւղին յայտնուի: Բարձր  
կտուրների վրայ կանգնում է մունետիկը և գոռում.  
— Այ ժողովուրդ, գաւառապետի հրամանն է, այս  
ինչ օրը պէտք է այս ինչ տեղը հաւաքուէք, տանու-  
աէք ընտրէք. հին տանուտէրի ժամանակը լրացել է.  
կամ թէ—այ ժողովուրդ, այս ինչ օրը եկեղեցու  
բակը պիտի ժողովուէք, երեսփոխ, հոգաբարձու  
ընտրէք, սրբազն առաջնորդի հրամանն է:

Քաղաքներում որ և է լուր կամ հրաման ժողովին յայտարարութիւնների կամ լրագիրների միջոցով։ Յայտարարութիւններն ու լրագիրները տպարաններում են տըլւում։



Հ Ո Վ Ի Ւ

Թարմ և մաքուր օդ է ծծում,  
Պարզ, սառնորակ ջուր խմում.  
Ուտում է կաթ, կաբագ ու սէր,  
Տունն է կանաչ, ծաղկոտ սարեր։

ՄԱՐՈՒԹԱՅ Ս. ԱՍՏՈՒԾԱՃՆԻ ՎԱՆՔԸ

Դաւիթը նախիրը թողեց, նետ ու աղեղ շինեց,  
անտառ ու դաշտ ընկաւ՝ որս անելու։ Մի օր մի  
պառաւի արտ մտաւ, լոր ու ճնճղուկ որսաց. պա-  
ռաւի արտը տրորեց, փչացրեց։

Բարկացաւ պառաւը, ասաց. — Գաւիթ, գրողս  
քեզ տանի, դու իմ ապրուստը փշացրիր։ Որս ես  
ուզում, գնա Սև սար, քո հօր որսի տեղը, այստեղ  
տեսակ տեսակ կենդանիներ կան, նրանց որսիր,  
ինչ ես լորի ու ճնճղուկի ետևից ընկել։

Դաւիթը շատ ցաւեց. մի բուռը ոսկի տուաւ  
պառաւին, ասաց. — Պառաւ, մի բարկամնար, մրտեղ  
է Սև սարը, ինձ ցնց տուր։

Ասաց. — Գնա Զէնով Յովանի մօտ, նա կասի։  
Հօրեղբայրն ասաց. — Ո՞րդի, քո հայրը որ մե-  
ռաւ, Մսրամելիքն եկաւ, այդ սարը և մեր բոլոր  
կալուածները գրաւեց։ Ել չենք համարձակում որսի  
գնալ Սև սար։

— Հօրեղբայր, դու ինձ ցոյց տուր՝ ես մեր  
սարը գնամ, թող Մսրամելիքը գայ, ինձ սպանի։

Եւ գնացին Սև սար։ Դէս ու գէն ընկան, շատ  
ման եկան. մուժը վրայ հասաւ, սարի վրայ պառ-  
կեցին, քնիցին։

Դէս գիշերին Դաւիթը զարթնեց. գէպի սարի  
գագաթը նայեց, տեսաւ՝ մի լուսեղէն կամար կա-  
պած՝ վառւում, վառվըռում է։ Հօրեղբօրը քնած  
թողեց, ինքը գէպի լոյսը գնաց։ Որ մօտեցաւ, տե-

սաւ մի ահապին մարմառ քար է, ճղուել է, միջից  
լոյս է բղխում:

Գիշեր էր. Դաւիթը քարի վրայ նշան արաւ,  
յետ դարձաւ: Հօրեղբայրը դեռ քնած էր. կանչեց  
Դաւիթը, ասաց.

—Հօրեղբայր, հերիք է, վեր,

Անուշ քնիցդ վեր, վեր.

Սարի գլուխը տես, տես,

Փալում է արևի պէս.

Երկնքից լոյս է իջել,

Թագ ու կամար է կապել:


Հինով-Յովանը զարթնեց: Դաւիթն ասաց:  
«Հօրեղբայր, տեսնում ես այն լոյսը. քեզնից երեք  
հարիւր վարպետ եմ ուզում, երեք հարիւր էլ մշակ,  
որ այս շաբաթ այստեղ բանեն, Մարութայ Բարձր  
Աստուածածնի վանքը շինեն»:

Հինով-Յովանը Դաւիթի խնդիրը կատարեց:  
Մինչև շաբաթ օրը վանքը շինեցին, աւարտեցին:  
Ճարաթ օրն եկաւ, Դաւիթն ասաց.—Հօրեղ-  
բայր, քեզնից քառասուն վարդապետ եմ ուզում,  
քառասուն տէր տէր, քառասուն էլ սարկաւագ, որ  
գան, վանքն օծեն, պատարագ անեն և այստեղ մնան  
միշտ:

Այդպէս էլ արին. վանքի վրայ պահապաններ  
դրին, իրանք Սասմայ քաղաք վերադարձան:

ԱՐԴԱՐԻ ԲԱԺԻՆ

Համբարձման գիշերը սուրբերը հէրանց են գլ-  
նում: Երկնքի գոները բացւում են, գնում, գալիս  
են հրեշտակները, փող են ածում սուրբերի հետ,  
թէ թէկի տուած պարում են: Նրանց տօնն է, նը-  
րանց հարսանիքը: Աստուած այդ գիշեր իւր սիրելի-  
ների համար երկնքից մի մի շաղաթաթախ լոյս է  
զրկում: Գալիս է լոյսը երկնքից, թրթռում է, շող-  
շողում է՝ ինչպէս մի այրուող խուրձ, իջում է  
սուրբի գերեզմանի վրայ, ծլում է, թափւում սուր-  
բի ծոցը: Արդարների համար ծածուկ չէ այդ. նը-  
րանց աչքը տեսնում է այդ լոյսը: Ճատերը եօթը  
տարի պաս են պահում, տարէնը եօթը մատաղ են  
մորթում, Համբարձման գիշերը անքուն են լուսաց-  
նում, որ այդ լոյսը տեսնելուն արժանի դառնան.  
բայց հազարից մէկն է արժանի դառնում:



Են ձորի միջում՝ Սև ձորի միջում  
Ըսկած է Յարոն խանչալը կրծքին.  
Են ամպի միջում՝ սև ամպի միջում  
Կտցահարում են իրար երկու ցին:  
Մէկն ասում է. «Անցիր, բարեկամ,  
Յարոյի աչքերն ես պիտի կուլ տամ.  
Ես էի նստած կաղնու կատարին,  
Որ սա մնաս բարով ասաց Շողերին:  
Անցիր, բարեկամ,  
Յարոյի աչքերն ես պիտի կուլ տամ»:  
Միւսն ասում է.—Գնա՛, բարեկամ,  
Յարոյի աչքերն ես պիտի կուլ տամ.  
Գնա՛, ես տեսալ, երբ որ Հասանը  
Յարոյի կուրծքը խրեց խանչալը.

Սա վերջին անգամ աչքերը բացեց,  
Զուխտ արցունք թափեց և ապա փակեց.  
Անցիր, բարեկամ,  
Յարոյի աչքերն ես պիտի կուլ տամ»...

Են ձորի միջում՝ Սև ձորի միջում  
Ըսկած է Յարոն խանչալը կրծքին.  
Են ամպի միջում՝ սև ամպի միջում  
Կտցահարում են իրար երկու ցին:

Ք Ա Զ Ո Ւ Ո Ւ Դ

Քաջ և անուանի որսորդ էր հայկաշէնցի Հայկը: Գանգուր մազեր ունէր, լայն թիկունք, հաստ և ուժեղ բաղուկներ, երկայն հասակ. այնպիսի մեծ մեծ, սուր, կրակոտ աշքեր ունէր, որ գազանն էլ նայելիս՝ սառչում, փետանում էր տեղը: Նա որ ման էր գալիս, գետինը ոտի տակ գողում էր: Լաւ կառավարում էր իւր ժողովուրդը. ամենքը նրան սիրում, նրա արեովն էին երգուում:

Նոյնպիսի քաջ որսորդ էր և ներբովթը: Դա մի զօրաւոր և շար թագաւոր էր. մտքումը դրել էր, որ Հայկին էլ իւր ձեռքի տակը գցի: Մեծ զօրք հաւաքեց և Հայկի վրայ գնաց: Մեր քաջ որսորդն էլ իւր որսորդական նետն ու աղեղը վերցրեց, թըշ-

Նամու առաջը գնաց: Նետն արձակեց. այնպէս արձակեց, որ ներբովթի կրծքից մտաւ, թիկոնքից դուրս եկաւ: Չար իշխանն ընկաւ. Նրա հետ եկած անթիւ մարդիկը վախից քար դարձան: Ներբովթի դիակը մի բարձր սարի վլուխ հանեցին և այնտեղ թաղեցին:

Քեզ յուսացան մեր հայրերը. նրանք յուսացան, եւ փրկեցիր նրանց:

Դէպի Քեզ աղաղակեցին եւ ազատուեցան:

Քեզ յոյս դրին, եւ չամաչեցին:



### ՈՐՍՈՐԴԻ ԵՐԿ

Սար ու ձոր չափում է  
Առաւօտը վաղ,  
Նետ ու աղեղ ձեռքին  
Որսորդն անվախ:

Ս.րծիւն օդի մէջ	Ուր որ հասնում է
է թագաւորում,	Նրա նետը սուր,
Սար ու ձորի մէջ	Բոլորը նրանն է՝
Որսորդն է իշխում:	Գազան, թևաւոր:

ԴԱԻԻԹ ԵՒ ԿՈԶԲԱԴԻՆ

Մորամելիքը լսեց, որ Դաւիթը Սև սարը կը-  
րաւել և Մարութայ վանքն է շինել։ Իւր իշխաննե-  
րից մէկին, որի անունը Կողբաղին էր, Սասմայ  
քաղաքն ուղարկեց։ Եօթը տարուայ հարկ է պահան-  
ջում։ Կողբաղինն առում էր.

— Կառնեմ Սասունից քառասուն աղջիկ գեղեցիկ,  
Քառասուն կարճ կնիկ, որ երկանք աղան,  
Քառասուն էլ երկայն՝ որ ուղտեր բեռնեն.  
Բեռներով ոսկի կտանեմ եօթը տարուայ հարկ,  
Սասուն կաւերեմ, քար ու քանդ կանեմ։

Դաւիթը ոչինչ չգիտէր. նա մի շեղպիկ է պր-  
տել, պառաւի արտն է գնում, շաղկամ հանում, ու-  
տում։

Պառան եկաւ. — Դաւիթ, դու իմ կորեկը արո-  
րեցիր՝ հերիք չէ, հիմի էլ շաղկամն ես փշացնում։  
Մի աղջիկ ունէի, նրան էլ գերի են տանում. և  
այդ քո պատճառով։

Ասաց. — Ի՞նչ ես ասում, պառաւ, այդ ի՞նչ զը-  
րոյց է։

Պառան ասաց. — Մորամելիքը մարդ է ուղար-  
կել, եօթը տարուայ հարկ է պահանջում. նա բեռ-  
ներով ոսկի է ուղում, քառասուն աղջիկ, քառասուն  
կարճ կնիկ, որ երկանք աղան, քառասուն էլ եր-  
կայն, որ ուղտեր բեռնեն։ Կանանցն ու աղջիկներին

հաւաքել են, այժմ էլ հօրեղբայրդ քո հօր գանձա-  
տանը նստած՝ ոսկին է չափում։

Վեր կացաւ Դաւիթը, գանձատուն գնաց։ Տե-  
սաւ՝ Կողբաղինը կանգնած նայում է, հօրեղբայրն  
էլ ոսկին է չափում։

Դաւիթը կանչեց. — Հօրեղբայր, վեր կաց, ես եմ  
չափում։

Զէնով-Յովանը չափելու պղինձը Դաւիթին տուաւ,  
ինքը վեր կացաւ։ Դաւիթը նստեց. պղինձը երես-  
վար գետնին է գնում, ոսկին պղինձի տակն է ա-  
ծում, մի փայտով սրբում, ապա դարտակ պղինձը  
ջուալի մէջն է գցում, ասում. — այս մէկ... երկու...  
երեք...

Այսպէս շարունակեց, մինչև Կողբաղինը բար-  
կացաւ. — Այդ ի՞նչ ես անում։ Յետոյ Զենով-Յովանին  
դարձաւ, ասաց. — Յեռացրու այս տղային. հարկը  
տալիս ես՝ տնկը, չես տալիս, քաղաքդ կաւերեմ։

Դաւիթը բարկացաւ, աչքերն արինով լցուե-  
ցան. պղինձը վերցրեց, այնպէս զարկեց, որ Կող-  
բաղինի երեսն արին դարձաւ. ապա վեր կացաւ, նրա  
ատամներն էլ հանեց, ասաց. — Գնա, իմաց տուր քո  
Մորամելիքին. ինչ կարող է, թող անի։

Հեռացէ՛ք ինձանից, ո՞վ անօրէններ.  
Տէրն իմ լացի ծայնը լսեց. Տէրը լսեց իմ  
աղաշանքը. Տէրն ընդունում է իմ աղօթքը։

Հինգ հաջող եհ Երկու ջղիկը

Յիսուս սարը բարձրացաւ. աշակերտների հետ  
նստեց այստեղ:

Նայեց, տեսաւ, որ շատ ժողովուրդ է զալիս  
իւր մօտ. և ասաց աշակերտներից մէկին: — Ո՞րտե-  
ղից հաց կառնենք, որ դրանք ուտեն:

Ինքը զիտէր, թէ ինչ պիտի անէր. բայց աշա-  
կերտներին էր փորձում:

Աշակերտը պատասխանեց. — Երկու հարիւր դա-  
հեկանի հացն էլ բաւական չէ, եթէ ամեն մէկը  
նոյն խոլ մի քիչ վեր առնի:

Մի ուրիշ աշակերտ ասաց. — Այստեղ մի պա-  
տանի կայ, որ հինգ գարեհաց և երկու ձուկն ունի.  
Բայց այդ ինչ անէ այսչափ մարդկանց:

Ասաց Յիսուս. — Նստեցրէք դրանց:

Նստեցին մօտ հինգ հաղար մարդ:

Յիսուս առաւ հացը, օրինեց և բաժանեց բազ-  
մականներին. նոյնպէս էլ ձկնից տուաւ՝ ինչքան որ  
կամեցան:

Երբ որ ամենքը կերան, կշտացան, ասաց աշա-  
կերտներին. — Ժողովեցէք փշրանքները:

Հինգ հացից աւելացած կտորները հաւաքեցին,  
տասներկու դամբիւղ լցրին:



Խ Ե Լ Օ Ք Ս Ա Ր Ե Ա Կ Հ

Ամառն էր. երկնքից կրակ էր թափւում: Սա-  
րեակը մի ծառի վրայ նստած՝ ծարաւ, պապակ  
այրւում էր: Սարեակը ծառի տակին մի փարշ տե-  
սաւ, ուրախ ուրախ ցած նետուեց, որ փարշի միջի  
ջրիցը խմի: Բայց խեղճը չէր կարողանում ջրին  
համնել, խմել:

Ամեն կողմից նայեց, մտածեց, կտուցը երկա-  
րացրեց, փարշի մէջ կոխեց, ոչինչ չեղաւ: Մի քանի  
անգամ կտցով խմեց հաստ կաւին, չկարողացաւ  
կոտրել: Զօր արեց, աշխատեց փարշը վայր դցել,  
բայց ոյժը չպատեց:

Ճատ էր շարշարւում սարեակը, նպատակին  
չէր համնում. բայց չէր յուսահատւում, չէր թուլա-  
նում: — Անկարելի բան չկայ, մտածում էր նա և  
աշխատում ջրին համնելու հնարը գտնել: Մտածեց,  
վերջապէս հնարը գտաւ. քարի կտորներ հաւաքեց,

փարչի մէջ զցեց. այնքան զցեց, որ ջուրը բարձրացաւ. սարեակը կտցով ջրին հասաւ, խմեց, ծառաւը կոտրեց:



Ա Ր Ա Գ Ի Հ

Արագիլները կանգնած էին իրանց բնի վրայ. զլուխները մէկ երկինք էին բարձրացնում, մէկ երկիր խոնարհում, երգում, կլկացնում:

— Այն ինձ են բարե տալիս, ասում է Զանադանը:

— 2է, ինձ, հակառակում է Արսէնը:

— Երկուսիդ էլ են բարեում, ամբողջ զիւղին էլ, ասաց տատը և նրանց վէճը վերջացրեց:

— Տես, տատի, ծտերն ինչպէս ուրախացել են,

ասաց Արսէնը. ինչպէս քաղցր ձայնով ճկճկում են:

— Ուրախացել են, քաղցրիկս, ուրախացել. չէք տեսնում քանի հագար ծտեր արագի բնի ցախերի արանքումն են իրանց համար բոյն շմել. ծտերը լաւ զիտեն, որ արագի ահից ոչ օձ, ոչ ուրուր, ոչ կատու և ոչ մի ուրիշ թշնամի չի կարող նրանց բնին մօտենալ, նրանց ձուերը խմել կամ ծտերն ուտել: չէնց զրա համար է, որ արագիլների գալովը պստիկ ծտերն այսպէս ուրախանում են:

— Տատի, հարցրեց մի օր Զանազանը պառաւին. — մեր զիւղը արագիլներով լիքն է, այնքան կերակուր գրանք սրտեղից են գտնում:

— Մեր զաշտերը, հնգիս, լիքն են օձերով. ճահիճների զորտերն իրանց կոկոցով զլուխ են տանում. արտերի մէջ անպիտան միները հազար տեղ ծակեր են բաց տրել. եթէ արագիլը չը լինէր, մինք ցորնի երես չէինք տեսնիլ:

— Բա օձն արագին չի կծում:

— Զատ էլ ուզում է, շատ էլ հետը կռուի է բռնւում, բայց միշտ յաղթուում է:

— Ինչպէս:

— Արագիլը թուշելիս՝ վերիից տեսնում է օձին և իջնում, նրա զլսին կտցով խփում:

Օձը փշացնում է, վրայ պրծնում, աշխատում է արագի բաց ոտքը կծել:

Արագիլն իւր թեփ ծայրն է օձի բերանին մօտեցնում ու անդադար նրա զլսին կտցում:

Կտցում է, կտցում, այնքան կտկտալով խփում

է օձի գլխին, մինչև նրա վլուսը ցրում է: Օձը  
երկար ու ձիգ փռում է դաշտի վրայ:

Յետոյ արագին օձի մէջ տեղից բռնում է և  
բերում բոյնը. բաժին բաժին է անում, ձագերին ու-  
տացնում, ինքն էլ կշահում:

Երբ ալեկոծ ծովի վրայուր վիզուր  
իմ մակոյկը խորտակուի,  
ես փրփրագէզ ալեաց միջին  
Դեռ իմ լուսը չեմ կտրիլ:

Բոլոր ուժով և համարձակ  
Բազուկներս կշարժեմ,  
Ալիքները պատառելով  
Դէպի ափը կժռչեմ:

### ՄՄՐԱՄԵԼԻՔԻ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ

ՄՄՐԱՄԵԼԻՔԸ Կողբագնին որ տեսաւ և Դաւթի  
վարմոնին իմացաւ, կատաղեց. մեծ զօրք հաւաքեց:  
Տամնիրկու տարեկան երեխաներից սկսած՝ մինչև  
ալեոր ծերերին զինուրեց: Ինքն էլ այդ զօրքի  
վլուխն անցաւ և Սամայ քաղաքի վրայ վնաց: Գես-  
պաններ ուղարկեց Զէնով-Յովանին, ասաց. — Զէնով-  
Յովան, ահա գալիս եմ մեծ զօրքով. թէ եօթը տա-

րուայ հարկը տալիս ես, տնկր. թէ չես տալիս,  
Սամայ քաղաքը կաւերեմ, քար ու քանդ կամեմ:

Յովանն ասաց. — Մենք չենք կարող կռիւ անել.  
թէ կռուի՝ Դաւթին է: Սպասեցէք, նրան հարցնենք:  
Դաւթին ասաց. — ՄՄՐԱՄԵԼԻՔԸ ես հարկ չեմ

տալ. ինչ կարող է, թող անի: Յովանն ասաց. — Դաւթի, այս գիշեր կպահ,  
մեր քաղաքի վրայ կթափուին, կաւերեն:

Ասաց. — Հօրեղբայր, դուք վնացէք, տանը հան-  
դիստ քնիցէք: Ես առաւօտը կոռելու կգնամ:

Նրա չարութիւնն իւր զլիսին կզայ.  
Նրա անիրաւութիւնն իւր զագաթի վրայ  
կիջնի:

Առիւծի կորիմները սոված են, քայց  
Տէրին ինսդրողները ո՞չ մի բարեքի պակա-  
սութիւն չունին:

Զօրքի շատութիւնով չէ թագաւորը  
ազատում: Հսկան մեծ ուժով չէ պրծնում:  
Տէրն է մեր օգնութիւնն ու ապաէնը:

Ա Ն Զ Ր Ե Ւ Ւ Ց Ա Ռ Ա Զ

Երկնքի վրայ ամպէ է կիտում

Տխուր, լալկան ցուրտ քամին.

Մութ անտառն է խուլ շշնչում,

Հեծում կոտրած եղենին:

Եւ տելաներ ահա խմբով

Դէպի գետն են սլանում,

Ամեն կողմից սուր հոսանքով

Ցուրտն է փչում, հառաչում:

Մութ է պատել ամենուրեք,

Մութ տաղտկալի, տիրաբեր.

Ճիչ են բառնում խեղճ, ահարեկ

Օդում ճախրող թռչուններ:

Չ Մ Ե Ռ Հ

Գիւղացիք ժողովուել, զրոյց էին անում իրանց  
ցաւերից:

— Ովկէ, այս ինչ թունդ ձմեռ արաւ. մտիկ  
արէք, տեսէք ձիմը ի՞նչպէս է վրայ տալիս:

— Ե՞ն, ասում ես՝ թէ ինչ անես: Խոտս ու  
յարդս բոլորովին հատել է. Աստուած ոչ անի, թէ  
դարունքն էլ ուշ եկաւ, տաւարներս սովից կոտո-  
րուելու են:

— Իմն էլ է հատնում:

— Դուք խոտ ու յարդ էք ասում, իմ հացս է  
հատնում: Ճանապարհներն էլ բաց չեն, թէ քաղաք  
գնամ, մի երկու թուման պարտք անեմ, որ երեխա-  
ներիս սովից պատ պահեմ:

ԴԱՀԻՆԹԸ ԶԻՆԻՈՒՄ Է

Դափիթը վեր կացաւ, նետ ու աղեղը վերցրեց,  
զնաց: Պառաւը տեսաւ, ասաց.— Դափիթ, ուր ես  
գնում:

— Գնում եմ Մսրամելիքի հետ կոռւեմ:

— Դու ինչ ունես, նետ ու աղեղնվ պիտի  
կռուես:

— Հապա ինչ անեմ:


Պառաւն ասաց.— Քո հայրն ունէք Քուռկիկ-  
Զալալի, գլխի գօտի, քամար սոկի, թուր կայծակի,  
մի սուրբ նշան իւր աջ թերին: Թրանք այժմ քո

հօրեղոր մօտ են, բայց նա սիրով չի տալ, պէտք ուժով առնես:

Դաւիթը Զէնով-Յովանի մօտ գնաց. Նրա փող-պատը բռնեց, թափ տուաւ, ոտքերը զետնից կրտ-քեց, ասաց.—Հօրեղրայր, քեզնից ուզում եմ Քուո-կիկ-Զալալի, զլսի գօտի, քամար ոսկի, թուր կայ-ձակի և սուրբ նշան. տալիս ես՝ տնր. չես տա-լիս՝ ուժով կառնեմ:

Հօրեղբայրն ասաց,—Այ որդի, գեռ եօթն տա-րիդ նոր լրացրիր, դու ինչ կռուող ես:

Ասաց.—Պիտի երթամ. Աստուած եմ կանչում, թշնամուս առաջը գնում. կամ ես կյազթեմ, կամ նա: Յովանն ասաց,—Որդի, այն օրից, որ քո հայ-րը մեռել է, Քուոկիկ-Զալալին գոմումն է փակած. Մսրամելիրի վախից գեռ գուրս չեմ հանել. գոմի դուռը պատ եմ շարել, նրա խոտը, յարողը, գարին երդիկով եմ տուել: Համա մենակ Քուոկիկ-Զալալին չէ, գոմումը կարգով երեք հարիւր ձի կայ կապած: Գնա, որը կհաւանես, քեզ լինի:



Դաւիթը գնաց, գոմը մտաւ. ձիերի մէջքին կարգով ձեռք տուաւ, ամենքը փորները զետնին

տուին: Դաւիթն ասաց.—Այս չէ Քուոկիկ-Զալալին:

Առաջ գնաց, մի դուռ տեսաւ, որ պատ է քա-շած, ծածկած: Ոտով խփեց, պատը քանդեց: Տե-սաւ, մի հրաշալի ձի է կտպած: Զեռը մեկնեց, որ ձիու մէջքին դնի. ձին արացի տուաւ. Դաւիթին չը դիպաւ, պատին դիպաւ. պատը չուռ եկաւ: Լաց ե-ղաւ Դաւիթը, ասաց.—Քուոկիկ-Զալալին, ես այն-պէս էի կարծում, թէ դու այս կռուից ինձ կազա-տես:

Աստծու հրամանով ձին լեզու առաւ, ասաց.

— Դաւիթ, որ այդպէս է, ես քեզ, դու ինձ:

Դաւիթը ձեռք տուաւ ձիու մէջքին, անսաւ մէկ թիղ աղը ու թող կայ: Զին գուրս հանեց, պառաւի մօտ տարաւ, ասաց,—Պառաւ, մի զլուխ սապոն վերցրնւ, երկու պղինձ շուր տարացրնւ, մի լաւ լուացիր:

Իսկ ինքը Զէնով-Յովանի մօտ գնաց:—Հօրեղ-րայր, այժմ միւս բաներն եմ ուզում:

Զէնով-Յովանը բերաւ զլսի թագը, ոսկի քա-մարը, կայծակի թուրը և ասաց.—Որդի, սուրբ նշանը ես չեմ կարող բերել. քո հայրը որ մեռել է, մնդուկի մէջ եմ գրել, պնդել: Գնա, ծունկ չոքիր մնդուկի առաջ, Աստուած կանչիր. Եթէ հօրդ պէս արդար ես, եթէ դու էլ արժանի ես, մնդուկը կը բացուի, սուրբ նշանը դուրս կգայ, քո աջ թեխն կկանգնի:

Դաւիթը գնաց, ծունկ չոքեց մնդուկի առաջ, լաց եղաւ, Աստուած կանչեց: Աստծու հրամանով

մնդուկը բացուեց, սուրբ նշանը թռաւ, Դաւթի աջ  
թևին կանգնեց:

Հեծաւ Քուռկիկ-Ճալալին, թագը զվախն դրաւ,  
կապան հազաւ, կայծակի թուրն ու ոսկի քամարը  
կապեց: Բայց քամարը Դաւթի մէջքով քառասուն  
պատ եկաւ. կայծակի թուրը գետնովն էր քարշ գա-  
լիս. թագն այնքան մեծ էր, որ մէջը քառասուն  
լիտր բամբակ դրին, նոր զվախն եկաւ:

Հօրեղբայրը տեսաւ, ասաց.—Ափո՞ս, հազար  
ափսոս Քուռկիկ-Ճալալին. ափսո՞ս, հազար ափսոս  
զվախ գոտին. ափսո՞ս, հազար ափսոս քամարը ոսկի,  
ափսո՞ս, հազար ափսոս թուր կայծակին, ափսո՞ս,  
հազար ափսոս մեր մանուկ Դաւթիթ:

Դաւթիթը վշտացած՝ վրայ բերաւ.—Հօրեղբայր,  
եթէ վերջին խօսքը շատէիր, ինձ չիշէիր, քո վիզը  
պիտի կտրէի:

Մօտեցաւ Յովանին, ձեռք համբուրեց. Յովանն  
էլ Դաւթի գլուխը համբուրեց:

Դաւթիթը կանչեց.

Ո՞վ քուրեր, մնացէք բարով,

Ինձ քոյլութիւն էք արել .

Ո՞վ մալրեր, մնացէք բարով,

Ինձ մալրութիւն էք արել .

Բարի գրացիներ, մնացէք բարով,

Մնացէք բարով

Մեծ ու պստկով:

Հօղեղբայրն ասաց.—Այ որդի, որ գնում ես,  
լսիր և մտիդ պահիր այս խրատս.—Ուր որ քո ձին  
ծնկները գետնին զարկի, այնտեղ վայր կգաս, ձիդ  
կվազես, կկերակրես, կքնիս: Ճանապարհին մի պող-  
պատի սիւն կայ. հայրդ որ կռուի էր գուրս գալիս,  
զարկում էր պողպատի սիւնին. եթէ կտրում էր,  
բանն յաջող էր, գնում էր. եթէ չէ յետ էր դառ-  
նում: Դու էլ այդ սիւնը կտեսինես. կիսփես. թէ  
կտրեց, զցեց, քո բանն յաջող է, գնա. թէ չէ  
յետ դարձիր, տուն եկ:

Գոհանանք Տէրիցը Նրա ողորմութեան  
եւ հրաշքների համար. Նա պղնծի դռները  
փշոնց եւ երկաթի նիզերը կոտրատեց:

Տիրոջ աչքն արդարների վրայ է եւ  
ականջը՝ նրանց ձայնի վրայ:

Արդարներն աղաղակում են եւ Տէրը  
լսում է. եւ փրկում է նրանց ամեն նեղու-  
թիններից:

Յ Յ Ա Ր Դ Գ Ո Ղ Հ  
Երեխաները պապի չորս կողմը կարեցին և քու-  
նը խանգարեցին:

—Պապիջան, պապի, ասա տեսնենք՝ այն լինչ  
խորդ ու բորդ տեղ է երկնքումը. կարծես մեր վե-  
րին արտի քարքարոտ ճանապարհը լինի. մանր ու  
մեծ աստղեր անկարգ, անկանոն ցըռւած են:

—Այն մեր ուլերն են կրծոտել:

—Ո՞րտեղից բարձրացան:

—Մի ձմեռ շատ ձիւն էր եկել. խոտ չկար,  
որ ոչխարն արածէր. մեր ուլերն ձիւնի վրայով՝  
բարձրացան, կրծոտեցին:

—Ճապա երէկ ասում էիր, թէ յարդգողի ճա-  
նապարհն է, ասաց երեխաներից մէկը:

—Եթէ զիտէք, էլ ինչու էր հոգիս հանում,  
թողէք քնեմ, ասաց պապը և ուզում էր երեսը միւս  
կողմը շրջել: Բայց ճարպիկ երեխաներից մէկն իս-  
կոյն լոք տուեց, անցաւ պապի կրծքի վրայից, միւս  
կողմը պառկեց և շարունակեց.

—Պապիջան, պապի, միայն այս մէկը, միայն  
այս մէկը պատմիր, էլ գլուխող չենք ցաւացնիլ:

—Ճապա Յարդգողի ճանապարհն է, ճարահատեալ  
սկսեց պապը. Մի զիշեր չար Բարչամը եկել է,  
մեր Վահագնի մարպիցը մի թոռ լիքը դարման

գողացել, չալակն առել ու փախել: Ֆանս քեզ մա-  
տաղ, քաջ Վահագն, չներին քիս է տուել ետեիցը,  
ինքն էլ մի բարձր բլրի գլխին կանգնել ու նայում  
է: Բարչամը յարդը շաղ տալով փախչում էր: Մեր  
խելօք թագաւորը հէնց որ տեսաւ, թէ չները չը  
կարողացան համնել և գող Բարչամը դիմացի սարի  
ետևին է ուզում անցնել ու ազատուել, այն բոպէին  
գաղուկիսանոց, կուանս պէս հաստ նետը դէմ ցցեց  
աղեղի լարին, աշքեց ու լարը ձգեց: Նետը՝ սլու...լ...լ,  
գնաց, այդ գող ու աւազակին ծափեց ու վզզալով անց  
կացաւ, հինգ օրուայ ճանապարհ հեռու վայր ըն-  
կաւ:

—Յետոյ ինչ է անում Բարչամը:

—Ի՞նչ պէտք է անէր, յարդի թոռը մէջքիցը  
գլորուեց, մնացածն էլ այնտեղ շաղ անցաւ, երկնքին  
երեսը բռնեց: Ինքն էլ թաւալուեց, սարի գլխից  
գլորուեց, ձորն ընկաւ:

ՅԻՍՈՒԽՍ ԲԺՇԿՈՒՄ Է ԻՇԽԱՆԻ ԾԱԽԱՑԻՆ

Հիւանդ էր իշխանի ծառան, հիւանդ, մեռնելու մօտ: Եւ իշխանը շատ էր սիրում իւր ծառային: Յիսուսի մասին լսելով հրէաներից մի քանի ծերեր ուղարկեց նրա մօտ. խնդրում էր, որ զայ և ծառային ապրեցնէ:

Ծերերը Յիսուսի մօտ եկան. աղաչում էին և ասում.—Նա արժանի է, որ այս ողորմութիւնն անես. որովհետև մեր ազգը սիրում է և մեր եկեղեցին էլ նա է շնոր:

Եւ Յիսուսը նրանց հետ զնաց. գեռ շատ հեռու էր հիւանդի տանից. իշխանը բարեկամներ ուղարկեց նրա մօտ և ասաց.—Տէր, մի յոգնիր, որովհետև արժանի չեմ, որ իմ յարկի տակ մտնեմ. խօսքով ասա, և ծառաս կրժշկուի:

Յիսուսը սիրեց իշխանին, հաւանեց նրա հաւատը և օրհնեց նրան:

Երբ այն ուղարկուած մարդիկը յետ դարձան, հիւանդ ծառային բժշկուած զտան:

Կ Ա Թ Ն Ա Ղ Բ Ի Ի Ր

Դաւիթը քշեց ձին, զնաց: Կաթնաղբիւրի վլրայ Քուռկիկ-Զալալին ծնկները զետնին զարկեց: Դաւիթն ասպանդակներով ձիու կողերին խփեց. մի կողաշարը կոտրեց, ասաց.—Մի ժամ ճանապարհ ես եկել, ինչ ես շուտ դադրել:

Ձին բարկացաւ, ասաց.—Ի՞նչպէս ես արեգակովը տամ, այլուես. քո հօրեղբօր խրատը ինչ շուտ մոռացար:

Դաւիթը զղաց. վեր եկաւ, կաթնաղբիւրի ջուրը տուաւ, ձիու կողաշարը լաւացաւ: Խոտ ու ջուր տուաւ ձիուն, ինքն էլ կաթնաղբիւրի ջրի մէջը մըտաւ, լողացաւ: Գուրս եկաւ, հաց կերտաւ, ջուր խրմեց, պառկեց ու քնեց:

Մի ժամ քնեց. երբ զարթնեց, տեսաւ՝ այնպէս է լցուել, այնպէս է հաստացել, զօրութիւնն, ոյժ տուել, որ զարմանալի: Թագի միջից քառասուն լիտր բամբակը հանեց, նոր զլիխն եկաւ. մէջը զօտիկը՝ որ քառասուն պատ էր գալիս, այժմ՝ մի պատ եկաւ. թուրը՝ որ զետնովն էր քարչ զալիս, այժմ ծնկներին էր համեռում:

Պ Ո Ղ Պ Ա Տ Ի Ս Ի Ս Ի Ն Ը Լ

Դաւիթն իւր աղօթքն արաւ, ձին հեծաւ, քշեց.  
Գնաց, պողպատի սիւնի մօտ կանգնեց: Քաշեց թու-  
րը, զարկեց: Սիւնը կտրուեց, այնպէս կտրուեց, ա-  
սես պողպատ չէր, պանիր էր. կտորը կտորի վրայ  
մնաց, վայր չընկաւ: Դաւիթը կարծեց, թէ սիւնը  
չի կտրուել, ասաց.

Զեռնեկ, դու չորանաս,

Որ զարկեցիր, սիւնը չկտրուեց.

Սչքեկ, դու խաւարուես,

Որ վատ նշան ես տեսնում:

Ասաց, ձեռքը չորացաւ, աչքը խաւարուեց:  
Լաց եղաւ Դաւիթը. տխուր, յուսահատ լաց եղաւ:  
Մտածեց, որ յետ դառնայ, տուն գնայ: Բայց մէկ  
էլ մօտեցաւ սիւնին, վշեց: Որ վշեց, վերկի կտորը  
թուաւ, վայր ընկաւ: Ուրախացաւ Դաւիթն, ասաց,

Զեռնեկ, դու կանաչ լինիս,

Որ զարկեցիր, սիւնը կտրեցիր.

Սչքեկ, դու պայծառ լինիս,

Բարի նշան ես տեսնում:

Ասածու հրամանով ձեռը ողջացաւ, աչքը լու-  
սաւորուեց:

Պ Ե Ղ Ջ Ո Ւ Կ Ի Կ Ե Ր Վ Ր Կ Լ

Հեռնւ, հեռնւ, մութ ամպեր,  
Պարզիր, երկինք կապուտակ,  
Անհետացէք մէգ, մշուշ,  
Թող փայլի վառ արեգակ:  
Զմռան ճնշող կապանքից  
Թող ազատուի բնութիւն,  
Արար-աշխարհ արթնանայ,  
Զքանալ քուն, թմրութիւն:  
Թող փշի մեղմիկ զեփիւռ,  
Լեռներ, գաշտեր կանաչեն.  
Սոխակները թող երգեն,  
Առու, վտակ կարկաչեն:  
Հովիւ, հօտաղ դուրս գան դաշտ,  
Հօտերն ծածկեն լեռան լանջ.  
Ալսուհետև թող խնդայ  
Խեղջ գեղջուկը ցաւատանջ:

Ճ Ն Ճ Ղ Ո Ւ Կ

Բողարը համը և զգոյշ քայլերով առաջ էր գնում. կարծես որսի հոտ էր առել:

Խոտերի վրայ մի ճնճղուկ կար, փոքրիկ, փափիկ, սիրուն ճնճղուկ. կտցի շուրջը դեղնագոյն էր, զլուխը աղուամազով էր ծածկուած: Քամի էր. նա ծառի վրայ չդիմացաւ, վէր ընկաւ: Այժմ տարածած իւր անզօր թեկիները՝ ուզում էր թռչել, ծառը բարձրանալ, բայց չէր կարողանում:

Իսկ շունը գողունի մօտենում էր նրան. մի փոքր էլ՝ և նա կրոնէր խեղճ թուշնակին: Բայց յանկարծ մօտակայ ծառից պոկուեց և ուղիղ շան գնչի առաջ՝ քարի նման վայր ընկաւ մարին, փոքրիկ մայրը. զզգուած, ալլայլուած էր նա. յուսահատ և աղիողորմ ճիշով մի երկու անդամ յարձակուեց շան ահարկու բաց բերանի վրայ:

Նա ուզում էր ազատել իւր ծագուկը. դրա համար նա շան վրայ յարձակուեց. բայց նրա փոքրիկ մարմինը գողում էր սարսափից. նա զոհում էր իրան:

Ճ՛մ... ինչ ահռելի հրէշ է զա ճնճղուկի համար. բայց էլի նա չկարողացաւ իւր բարձր, ապահով տեղը հանդիսաւ նստել: Մէրը, մայրական սէրը վերևից վայր նետեց նրան:

Բողարը կանգ առաւ. նա հասկացաւ մօր սիրալ, նրա ոյժը և յետ դարձաւ:

ՄՄՐԱՄԵԼԻՔԻ ԶՕՐՔԸ

Դաւիթը բշեց ձին, զնաց, սարի զլուխը բարձրացաւ: Նայեց, տեսաւ, որքան երկնքում աստղ կայ, Մսրամելիքն այնքան վրան է զարկել դաշտի մէջ: Վախեցաւ Դաւիթը, ասաց. — Օրհնեալ, բարերար Աստուած, ես ի՞նչ անեմ, թէ նրանք բամբակ դառնան, ես՝ կրակ, չեմ կարող նրանց այրել. թէ նրանք դառներ լինին, ես՝ զայլ, չեմ կարող նրանց կոտորել:

Զին ասաց. — Դաւիթ, մի վախենար, որքան քո թուրը կտրի, այնքան իմ պոչն ու աքացին կը ջարդեն նրանց: Միայն դու չխարուիս, վայր չգաս:

Դաւիթն ասաց. — Ի՞նչ անեմ. թէ գաղտնի գընամ, կասեն՝ Դաւիթը գող եկաւ, գող զնաց. թէ գաղտնի չգնամ, վախենում եմ նրանց բազմութիւնից:

Աստուած կանչեց, Մսրամելիքի զօրքին դարձաւ, ասաց. — Զարթեցէք, վեր կացէք, զէնքնը կապեցէք, ձիեր թամբեցէք, հեծեցէք. շատէք Դաւիթը գող եկաւ, գող զնաց:

Ինքն էլ թուրը հանեց և զօրքի մէջն ընկաւ: Երկու զլուխ զնաց, եկաւ. դաշտը արեան հեղեղով ծածկուեցաւ: Որքան Դաւիթը կոտորեց, այնքան էլ ձին ջարդեց:

Մի ալեսր մարդ առաջ եկաւ, Դաւիթին ասաց. — Դաւիթ, զլսիդ-արեիդ մատաղ, ինչու ես այս

խեղճ մարդկանցը կոտորում։ Մսրամելիքը սրանց ուժով է բերել։ Եթէ կտրիմ ես, գնա, Մսրամելիքի հետ կոխւ արա։

Դաւիթը հարցրեց. — Ո՞րն է Մսրամելիքի վը-րանը։ Պատասխանեց. — Այն կանաչ, մեծ վրանը։

ԴԱԻԻԹԸ ՀՈՐԻ ՄԷ

Գնաց, Մսրամելիքի դռան առաջ կանգնեց, ա-սաց. — Մսրամելիքին կանչեցէք, գայ, կոխւ անենք. անմահ է, նրան մահ եմ բերել. անզրող է, նրան գրող եմ բերել։

Ասացին. — Մսրամելիքը քնած է. եօթն օր է քնում, դեռ երեքն է անցել։

Ասաց. — Չեմ իմանում, պիտի գայ՝ կոխւ անենք։ Բերին, շամփուլներ կրակին գցեցին, կարմրացրին, Մսրամելիքի ոտքին տուին։ Մսրամելիքը քնի մէջ կանչեց. — Անպիտաններ, տեղս լաւ չէք շինել. լու կայ, ինձ կծում են։

Դաւիթը վրայ բերաւ. — Վեր կաց, լու չէ, ես եմ։

Մելիքը վեր չկացաւ, էլի քնեց։ Այս անզամ գովթանի խոփ կրակցրին, նրա ոտքին տուին։

Մսրամելիքն քնի մէջ ասաց. — Անպիտաններ, տեղս վատ էք շինել, լուերն ինձ կծում են։

Դաւիթը կանչեց. — Մսրամելիք, վեր կաց, ես ու դու կոխւ անենք։

Մսրամելիքը վեր կացաւ. Որ Դաւիթին տեսաւ վչեց. նրա խելքով Դաւիթը պիտի ընկնէր։ Բայց Դաւիթը պինդ կանգնած է։ Ասաց. — Դաւիթ, արի, նատիր, ուտենք, խմենք, խօսենք, յետոյ կոխւ ա-նենք։


Դաւիթն ուզում էր ձիուց իջնել, ձին փախչում էր. ձին իմաստուն էր. գիտէր, որ Մսրամելիքը քա-ռառասն գաղ հոր է փորել, բերանը թռուերով ու թռղիքներով ծածկել, որ Դաւիթը նստի, հորի մէջն ընկնի։

Դաւիթին խարեցին, ձիուց վայր բերին. Զին քարկացաւ, փախաւ, սարի գլուխը գնաց։ Դաւիթին հորի վրայ նստեցրին. նստեց և հորի մէջն ընկաւ։

Մելիքն ասաց. — Նա պէտք է ինձ հետ կոխւ անէր. թող մնայ այնտեղ, մինչև ոսկրները վը-ռեն։

Զարերը շրջապատեցին ինձ, իմ ձեռ-ներն ու ոտները կապեցին. բայց Դո՛ւ, ով իմ Տէր, մի՛ հեռանար. փրկի՛ք ինձ, ազ-տի՛ք ինձ առիւծի քերանից։

Նրանց քերանը իւղից աւելի կակուղ է. բայց չարութեամբ լիքն է սրտները. Նրանց խօսքերը ձէթից աւելի կակուղ են, բայց արած թրեր։



*On how such a person would be used by you*

Քաղցած էր աղուէսը. մօտեցաւ աքլորին, աւսաց. «Աքլորիկ, որքան սիրուն ես երգում. երանիք բան չունենայի, գիշեր-ցերեկ այստեղ նատէի և քաղցր ձայնդ լսէի: Բայց ափսո՞ս, վաղուանից” էլ անուշ երգդ չեմ լսիլ, որովհետեւ ո. Կարապետ ուխտի պիտի զնամ: Է՞հ, մեղաւոր եմ, շատ շարութիւններ եմ գործել. այժմ լաց եմ լինում, տղօթք եմ անում, ծոմ եմ պահում, ուլստի եմ գնում, որ Աստուած մեղքերիս թողութիւն տայ: Ախ, աքլոր, որրան բարի կլինես, որ ինձ հաւաքունը տանես, այնտեղ հաւերից էլ ներողութիւն խնդրեմ, յիտոյ ո. Կարապետ զնամ:

Ազլորը լսեց խաթերայի խօսքերը, խղճաց նը-  
րան. ասաց. — Ահա հաւաքունիր, շտապիր:

Վազեց աղուէսը, հաւաբունը մտաւ, բռնեց  
հաւերին, խեղփեց ու կերաւ։ Աքլորին ասաց.

— Ո՞վ աքլոր, զիտե՞ս որ անպաշար և անօթիք կարելի չէ ուխտի գնալ, այն էլ այստեղից ո. Կառապետ:

Աշոթ Առաքել Աշոթ Օթօթ Ք Աշոթ Առաքել  
Աշոթ Առաքել Աշոթ Օթօթ Ք Աշոթ Առաքել  
Աշոթ Առաքել Աշոթ Օթօթ Ք Աշոթ Առաքել  
Աստուած, լսիր ինձ, նեղութեան մէջ եմ.  
Զերմ աղօթքներս ուղղում եմ ահա  
Քեզ մօտ երկինքը: Կարող ես սարդի  
Սստայնի թելը ամըացնել ինչպէս  
Նաւի հաստ պարան. ամենակարող  
Քո զօրութիւնը կարող է երկաթի  
Պինդ կապանքները սստայնի բարակ  
Թելերի փոխել. կամեցիր, կընկնին  
Այս շղթաները, և կպատառւին  
Բանտիս պատերը:

Օ Ք Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Գիշերը Զէնով-Յովանը երազ տեսաւ. Մարայ աստղը պայծառ էր, Սասմայ աստղը մռայլ: Քնից վեր կացաւ, ասաց. — Կնիկ, վեր կաց. երազ անեայ՝ Մսրայ աստղը պայծառ էր, Սասմայ աստղը մռայլ. Դաւիթը ձեռքից գնաց:

Ասաց. — Այ մարդ, քո տունը չքանդուի, քեզ համար քնում ես, ուրիշերի համար երազ անեանում:

Յովանն էլի քնեց. տեսաւ՝ Մսրայ աստղը շատ պայծառ, Սասմայ աստղը քիչ էր մնում՝ անցնէր վեր կացաւ, կնոջը կանչեց:

Կնիկն ասաց. — Այ մարդ, բաւական է. դու չես քնում, ինձ էլ չես թողնում, որ քնեմ:

Զէնով-Յովանն էլի քնեց, նոր երազ տեսաւ. Մսրայ աստղն եկաւ, Սասմայ աստղը կուլ տառաւ. Ասաց. — Կնիկ, վեր կաց, Դաւիթին սպանեցին:

Կնիկն ասաց. — Ա, դու ինչո՞ւ չես քնում. այս գիտէ, հիմի Դաւիթը նրտեղ է կերուխումի նըտեղի:

Զէնով-Յովանը բարկացաւ. կնկանը մի պքացի դարկեց. կնիկը վեր կացաւ, ճրագը վառեց:

Յովանը զէնքերը կապեց, պատրաստուեց, պքաց, գոմի դուռը բաց արաւ, ձեռը սիպտակ ձիռւ մէջըին տարաւ. ձին փորը գետնին տուաւ: Հարցրեց. — Միատակ ձի, Դաւիթի կուրին երբ կհասցնեա ինձ:

Պատասխանեց. — Մինչև առաւօտը: Յովանն ասաց. — Ափսոս այն կեր, որ քեզ եմ տուել:

Դնաց, ձեռը կարմիր ձիռւ մէջըին տարաւ: Հարցրեց. — Կարմիր ձի, Դաւիթի կուրին ինձ երբ կհասցնես:

Պատասխանեց. — Մինչև մի ժամ:

— Ափսոս իմ նեղութիւն, որով քեզ եմ պահել: Ապա գնաց, ձեռը սկ ձիռւ մէջըին տարաւ: Սկ ձին փորը գետնին չտուաւ. Յովանը սկ ձիռւ գըլուխը համբուրեց, հարցրեց.

— Սկ ձի, Դաւիթի կուրին ինձ երբ կհասցնես:

Ասաց. — Թէ կարողանաս քեզ պահել, ոտղ դընես մի զանգուն, մինչև միւս ոտղ էլ շուռ տաս, միւս զանգուն տանես, քեզ Դաւիթի կուրին կհասցնեմ:

Զէնով-Յովանը սկ ձին հեծաւ. ինչ հեծաւ. ոտը մի զանգուն էր դրել, մինչև միւս ոտն էլ շուռ կտար, միւս զանգուն կլնէր, սկ ձին հրեղէն էր, թռաւ, Յովանին սարի գլուխը տարաւ:

Քուռկիկ-Ճալալին խրխնջալով Զէնով Յովանի մօտ եկաւ: Զէնովը վախեցաւ, ասաց. — Դաւիթն սպանուած է, ձին փախել, այստեղ է եկել:

Յովանը կանչեց, ձայնը սար ու ձոր ընկաւ. ասաց. — Դաւիթ, նրտեղ ես, յիշիր Մարութայ բարձը Աստուածածին, յիշիր սուրբ Նշանը, որ քո աջ թէկին:

Չայնը Դաւթի ականջն ընկաւ. ասաց.—Ով  
Մարութայ բարձր Աստուածածին, ով սուրբ Նը-  
շան։ Երկնքից շղթաներ կախ ընկան, Դաւթիթը  
բռնեց, թռաւ, հորից գուրս եկաւ։  
Մորամելիքը սարսափեց. էլ չկարողացաւ Դաւ-  
թին մօտենալ։

Աստուած մէկ է, ողորմութիւնը հա-  
զար։

Բարեկամը նեղ օրուայ համար է։  
Նա է յաղթում, ով որ յոյսը Աստծու  
վրայ է դնում։

---

Չ Ի Ի Ն

Երբ ձիւն է գալիս երկնքից ի վար,  
Իմացիր՝ մեծ բախտ է մարդոց համար.  
Վերմակի պէս տաք ծածկում է գետին,  
Որ բոյսի արմատն դիմանալ ցրտին.  
Հողին տալիս է հիւթ, պարարտութիւն,  
Դաշտին ու արտին մեծ առասութիւն։  
Մի տրտնջար, մարդ, գու բնութիւնից,  
Թէ տաք և թէ ցուրտ օգուտ են մեզ միշտ։

---

Բ Ա Ր Ի Գ Ո Ր Ծ Հ

Եօթանասուն տարեկան ալմոր ծերունին իւր  
պարտիզի մէջ տանձի և խնձորի ծառ էր տնկում։  
Ճատ աշխատելուց խեղճը քրտնել, զուր էր դա-  
ռել։

Մի երիտասարդ պարոն տեսաւ ծերունուն և  
ասաց. «Ճերանկ, ինչու ես իգուր նեղովթին բա-  
շում. ինչու ես տանջուում, չարչարուում. մինչև այդ  
ծառերն արմատ բռնեն, մեծանան, պտուղ տան,  
դու կմեռնիս։

—Ի հարկ է կմեռնիմ, պատասխանեց բարի  
ծերունին. բայց ինչպէս երկում է, դու կարծում  
ես, թէ մարդ միայն իւր գլխի համար պիտի աշ-  
խատի։ Ո՞չ, որդեակ, ուրիշների համար էլ պէտք է  
մտածենք։ Ահա տնկում եմ այս ծառերը. թող սր-  
բանք մեծանան, պտուղ տան, և ես մեռած լինիմ։  
ինչ անենք։ Ուրիշները կուտեն, կիշեն իմ բարի  
գործը և կօրհնեն ինձ։

Ով որ Աստծուն սիրում է, միշտ բա-  
րի է գործում։

---

Մ Ե Ր Ա Ս Տ Հ Ը

Աստղերը պէծ-պէծ վերևն են փալում  
Նման տղայոց ցոլուն աչերուն.

Մի սիրուն աստղիկ կայ երկնի վրան,  
Գիտեմ այն աստղը որին է նման:

Մեր դպրոցի մէջ կայ խելօք տղայ,  
Դասերը միշտ լաւ սովորում է նա.  
Հլու աշկերտ է, ժիր ամեն բանին,  
Նա կլինի աստղը մեր ալգեստանին:

ԴԱՒԹԻ ԵԻ ՄՄՐԱՄԵԼԻՔԻ ԿՈՒԽԻԾ

Դաւիթին ասաց.—Մսրամելիք, այն անդամ ինձ  
խաբեցիր, հիմի ինչ պիտի անես:

Մսրամելիքն ասաց.—Արի, նստիր:

Ասաց.—Ել չեմ նստիլ, վեր կաց, կռիւ ա-  
նենք:

Մսրամելիքն ասաց.—Կռիւր զօրմվ է, թէ  
հերթով:

—Հերթով է:

—Որ հերթով է, հերթն ումն է. մեծը ես  
եմ, թէ դու:

—Հերթը քոնին է:

Դաւիթը զնաց, հրապարակի մէջ կանգնեց:  
Մսրամելիքը զնաց, եկաւ, իւր գուրզը զարկեց.  
փոշի բարձրացաւ, արևի երեսը ծածկեց. ասաց.—  
Դաւիթը հող էր, հող դարձաւ:

Դաւիթն ասաց.—Մսրամելիք, ես դեռ այստեղ  
եմ, զնա, մէկ էլ զարկիր:

Մսրամելիքն երեք անդամ զնաց, եկաւ, գուրզը  
զարկեց. փոշի բարձրացաւ, Դաւիթին բռնեց, ա-  
րևի երեսը ծածկեց: Ասաց.—Դաւիթը հող էր, հող  
դարձաւ:

Դաւիթն էլ ասաց.—Մսրամելիք, ես դեռ այս-  
տեղ եմ:

Զարկելու հերթը Դաւիթին հասաւ:

Մսրամելիքն ասաց.—Դաւիթ, ինդիր ունիմ:

—Ի՞նչ ինդիր:

— Ուզում եմ քառասուն գալ հոր փորեմ:  
— Փորիր:

— Ես գնամ, հորի մէջ նստեմ, հորի բերանին  
քառասուն ջրաղացաքար քաշել տամ, քարերի վրայ  
էլ քառասուն գոմչի կաշի գցել տամ, նոր խփիր:  
Դաւիթն ասաց.—Լաւ, ինչպէս ուղում ես,  
արա:

Մորամելիքն էլ այնպէս արաւ:

Դաւիթը գնաց, եկաւ, որ զարկէր: Մորամե-  
լիքի մայրն առաջ եկաւ, ասաց.—Դաւիթ, չէ՞ որ  
քեզ պահել, պահպանել եմ, այդ մէկ զարկն ինձ  
բաշխիր:

Դաւիթը բաշխեց:

Մէկ էլ գնաց, եկաւ, որ զարկէր, Մորամելիքի  
քոյրն առաջ եկաւ, ասաց.—Դաւիթ, երբ դու փոքր  
էիր, ես քեզ շալակել, ման եմ ածել. այդ մէկ  
զարկն էլ ինձ բաշխիր:

Դաւիթը այդ էլ բաշխեց:

Մնաց երրորդ զարկը: Դաւիթն գնաց, եկաւ  
որ զարկէր, Մորամելիքի քոյրն էլի եկաւ, ասաց.  
— Դաւիթ, այդ մէկ զարկն էլ ինձ բաշխե՞ս:

Ասաց.—Դնա, անպիտան, ես մնացի, մի զարկ  
և Աստուած:

Դաւիթը գնաց, եկաւ, Աստծու անունը տուաւ,  
յիշեց Մարութայ բարձր Աստուածինը, ս. Նշանը,  
որ իւր աջ թեին, և զարկեց: Որ զարկեց, Աստծու  
հրամանով քառասուն գոմչի կաշին կտրեց, քառա-

սուն ջրաղացաքարն էլ կոտրեց, անցաւ, Մորամելի-  
քին միջից կէս արաւ:

Մորամելիքը կանչեց, ասաց.—Դաւիթ, ես գեռ  
այստեղ եմ:

Դաւիթն ասաց.—Մորամելիք, մի քեզ թափ  
տուր:

Մորամելիքը որ իրեն թափ տուաւ, մի կէմն  
այս կողմ, միւս կէմն այն կողմն ընկաւ:

Սասմայ քաղաքն աղատուեցաւ. Դաւիթը Մոլին  
էլ գրաւեց, եղաւ թագաւոր:

Տուէք Տիրոջը, ո՞վ Աստուծոյ որդիք,  
փառք եւ օքնութիւն տուէք Տիրոջը:

Հեթանոսները կուլ գնացին այն հորի  
մէջ, որ շինել էին. նրանց ոտները փաթա-  
թուեցան այն վարժի մէջ, որ թագցրել էին:

Արդարութիւնով մարդ քարծրանում է,  
չարութիւնով ընկնում, կործանում:

Յ Ա Յ Ս Ս

Թող փչէ քամին պինդ պինդ երեսիս,  
Վերից՝ ամպերից սաստիկ թող ձիւն գալ,  
Որքան որ կուզէ՝ թող փչէ ձմեռ,  
Յուսով եմ վաղ-ուշ գարուն պիտի գալ:

Թուխաը թող պատէ երկինքը պայծառ,  
Թանձը մառախուղ երկիր թող պատէ,  
Տարերք աշխարհիս խառնուին իրար,  
Յուսով եմ վաղ-ուշ արև պիտ ծագէ:

Թող գալ փորձութիւն, թող գալ հալածանք,  
Խաւար թող գառնայ անազօտ լոյսը,  
Սարսափելի չեն մարդուս տառապանք,  
Միայն չկտրուի խղճուկի լոյսը:

Հ Ա Ս Կ Ե Ր

Ամառն էր. արտերը հասել, հնձող էին կանչում:  
Երեխան դաշտում վազվզում էր, խաղում, իսկ հայրը  
մէկ որդուն էր նայում, մէկ արտին և հիանում:  
Հասկերը զրաւեցին երեխայի ուշը. նայեց, տեսաւ՝  
բոլոր հասկերն իրանց գլխները կախել, խոնարհել են,  
միայն մէկ հասկ կայ, որ գլուխը բարձր բռնել,  
հպարտ հպարտ իւր ընկերներին է նայում. ասես՝  
ծաղրում է նրանց:

Երեխան դարձաւ հօրը, հարցրեց.—Հայրիկ,  
ինչու այդ հասկն այդպէս ուղիղ է կանգնել. ինչու դա  
էլ միւսների պէս խոնարհ գետնին չլ նայում:

Հայրը պատասխանեց.—Ո՛րդի, բոլոր հասկերը  
հատիկներով լիբն են, դրա համար էլ իրանց գլխները  
վէր են թողել: Իսկ այդ ուղիղ կանգնած հասկը  
դարտակ է. դարտակութիւնից է նրա հպարտութիւնը:

Պտղատու ծառը գլուխը կախ կպահի:

Ե Ր Կ Ո Ւ Խ Ո Փ

Երկաթավաճառը երկու խոփ ունէր. երկուսն էլ մի կտորից. երկուսն էլ մի փարպետի ձեռքով շինուած:

Դրանցից մէկը երկրագործի ձեռքն ընկաւ. նա տարաւ, բանեցրեց: Միւսը խանութում ընկած մնաց:

Մի բանի ժամանակից յետոյ այդ խոփերը իրար պատահեցին: Մէկը սիրունացել, արծաթի պէս պսպղում էր. միւսը սեացել, ժանգոտել էր: Զարմացաւ սեացած խոփը, հարցրեց.

— Այդ ինչիցն է, բարեկամ, որ դու այդպէս գեղեցկացել, արծաթի պէս պսպղում ես, իսկ ես սեացել, ժանգոտել եմ:

Պատասխանեց.—Նրանից է, որ ես միշտ աշխատել եմ, իսկ դու պարապ-սարապ՝ խանութումն ընկած ես մնացել:

Ա Ռ Ի Ի Ժ Ա Զ Ե Ւ Մ Հ Ե Ր

Ինչպէս արծիւն օդի մէջ իշխում, ինչպէս արել պայծառ աստղերի մէջ թափաւորում, այդպէս էր Մհերը բոլոր պետերի, իշխանների մէջ: Կայծակի թուրն իւր ձեռքին բռնած՝ ընկնում, խորտակում էր ամեն չար բան, պահում, պաշտպանում ինչ որ բարի էր: Նստում էր նա իւր Սասուն բաղաքում, այնտեղից սարսափ օտարին ազդում: Ոչ ոք չէր կարող նրա դէմ կանգնել: Ոչ միայն մարդիկ, այլ դի և վիրապ, գաղան կատաղի նրա հարուածին չէին դիմանալ:

Ինչպէս երկնքից կայծակ է թռչում, ջնջում, կործանում ինչի որ դիսչում, այդպէս էր Մհերը Սասունից իջնում և իւր թշնամուն հող մոխիր գարձնում:

Եյրերի միջին ապրող դեերը նրա անունիցն էին սարսափում. գահերի վրայ նստած պետերը «Մհեր» լսելիս՝ դողում, սարսուում:

Դեռ նա փոքր էր, տասը տարեկան: Դէպ Սասուն տանող լեռնուղու վրայ առիւծ երևաց, ահոելի վիշապ: Ոչ ոք Սասունից չէր կարող դուրս գալ: Վիշապն ամեհի ամենին բռնում է, հուալ տալիս, լափում:

Եւ Սասունի մէջ թանգութիւն ընկաւ. հացը կտրուեց. ինչպէս մանգաղը արտն է հնձում, այդպէս էր սովը մարդկանց կոտրում:

Մհերը մի օր իւր հօր մօտ եկաւ և այսպէս

խօսեց. — Հայրիկ, ինչո՞ւ է հացը կտրուել. ինչո՞ւ սասունցիք այսպէս փակուել են իրանց քաղաքում: Ինչո՞ւ մեր դրսի գիւղ քաղաքներից ցորեն չեն բերում:

— Որդի, վիշապ է ճամբին լոյս ընկել, ով անց է կենում, բռնում է, լափում:

— Հայրիկ, հեռուից է մարդկանց վնասում, թէ մօտենալիս է բռնում, ուտում:

— Հեռուից չէ կարող մարդկանց վնասել, ով մօտենում է, նրան է ուտում:

— Որ այդպէս է, հայր, առաւօտը վաղ ես գուրս կդնամ, կուռեմ նրա հետ, տեմնեմ՝ ինչպէս է նա ինձ վնասում:

— Որդեակ, ոչ սուր և ոչ նետ նրան չեն աղդում. զուր է զնալդ, նա քեզ էլ կուտի:


Մհերը հօրը ականջ շդրաւ. առաւօտը վաղ տանից գուրս եկաւ, առիւծին գնաց:

Քաղցած էր վիշապը. մի քանի օր էր, որ այն տեղերքով մարդ չէր անց կացել: Կատաղած էր նա. աչքեր կարմրել, արնով են կալուել: Ունում է, գոռում, սարսափ տարածում: Նրա ահիցը մեծ անտառի մէջ էլ ձայն չի լսում: Թոշունը քաշուել, իւր բոյնն է մտել. գագանը փախել, իւր որջում պահուել:

Վիշապը տեսաւ՝ ահա հեռուից հաստատուն քայլով առաջ է գալիս մատղահաս տղայ: Երբ որ մատղահաս տղան մօտեցաւ կատղած գաղանին, սա մի պինդ գոռաց, ահուի ձայնով թնդաց, որոտաց, տեղից վեր թռաւ, նրա վրայ ընկաւ:

Երար բռնեցին. Մհերն ու վիշապ իրար բռնեցին և քաշքացին: Վիշապի գլուխց Մհերը բռնեց, կատաղի թափով որ գեամին զարկեց, գետինը պատռուեց, նա մէջը խրուեց. ապա վրայ հասաւ, ծնօտից բռնեց, ճղեց ու քաշեց, մի կողմ շպրտեց:

Եւ այդ օրուանից անունը մնաց Առիւծաձի Մհեր:



Է Զ Մ Ի Ա Ժ Ի Ն

Մի օր կար՝ մենք էլ ուրիշ ազգերի հետ մոռուած, կռապաշտ էինք. ճշմարիտ Աստուածը թողած՝ քարի ու փայտի ձեռագործ արձաններ էինք պաշտում:

Եկաւ Քրիստոս և Քրիստոնէութեան առաջին ճառագայթը՝ առաջին անգամը մեր աշխարհի վրայ գցեց. մեր Սբգար թագաւորին իր բոլոր հպատակների հետ քրիստոնեայ շինեց:

Բայց խաւարի մէջ մեծացած մարդիկը գեռ խաւարը լոյսից շատ էին սիրում. կռապաշտութիւնը նորից զլուխ բարձրացրեց:

Հայի Աստուածը ողորմած էր. երեք հարիւր տարի յետոյ վեր կացրեց մի քարեպաշտ հայ մարդ՝ Քրիզոր անունով, ու նրա ձեռքով մեր աշխարհը հուր յաւիտենական անհանգչելի լուսաւորեց:

Քրիզորը մեր կռապաշտ Տրդատ քաջ ու հզօր

թագաւորին և բոլոր հայերին քրիստոնեայ շինեց. մեր ազգի հայ անունի վրայ քրիստոնեայ բառն էլ աւելացրեց. անուններս հայ-քրիստոնեայ դրեց: Եւ Աստուծոյ տաճարը՝ Միածին Որդի Յիսուս Քրիստոսի հրամանով շինեց Վաղարշապատ քաղաքում՝ Տրդատ թագաւորի ապարանքից նշ հեռի:

Մայր եկեղեցու տեղը Փրկիչն ինքն իւր ձեռքով նշանակեց:

Քրիզորն երազում տեսաւ, որ երկինքը բացուեց. Միածին Որդին Յիսուս Քրիստոս լուսեղին կերպարանքով հրեշտակների անթիւ բազմութեամբ շրջապատուած՝ իջաւ երկներից:

Նա բռնած ունէր ձեռքին ոսկի մեծ ուռն. իջաւ, հասաւ քաղաքի կեդրոնը և ձեռքի ուռովը լսվեց գետնին:

Ուսի հարուածի ձայնը դղրդեցրեց երկիրը և տարածուեց մինչև սանդարամետի անգունդը:

Մէկ էլ սուրբ Քրիզորը տեսնում է, որ Քրիստոսի լիման տեղը կախուեցաւ մի ճախարակաձև ոսկի խարիսխ և մեծացաւ, բարձրացաւ, եղաւ մի մեծ բլբի չափ:

Այդ բլբի վրայ տնկուեց մի շատ բարձր հրեղին սիւն, որի գլխին փայլեց լուսափայլ խաչը:

Այդ բլբի տակից յանկարծ մի վարար աղբիւր դուրս հոսեց ու քչքշալով ծածկեց մեր աշխարհը՝ ինչպէս կապոյտ ծով:

Հինց այդ ժամանակ մեր աշխարհի բոլոր ընա-

կիչները, որոնք մինչև այդ օրը մրի պէս սկ էին, լողացան այդ ծովի մէջ ու գարձան ինչպէս մետաքսի պէս փափկաբուրդ գառներ: Սրանք բոլորը թեւաւորուեցին և խառնուեցին հրեշտակների դասի հետ:

Այդ ժամանակ Ինքը Տէր Յիսուս Քրիստոսն իւր օրհնուած բերանով սուրբ Գրիգորին ասաց. — Քո ձեռքով հայ մարդը իւր վրայից պիտի շպրտի խաւարի ծածկոցը և սպիտակ, թեաւորուած գառների նման թռչի երկինք, միանայ հրեշտակների հետ:

— Իսկ իմ իշման տեղը, հրամայեց Միածին Թրդին, ուր ես ուռով լսվեցի, դու պէտք է այս աշխարհի մայր եկեղեցին կանգնես, անունը Եջմիածին դնես: Այստեղ կնստեն քո յաջորդները մինչեւ աշխարհի վերջը:

Եպրէ քաջ և հզօր Տրդատը. լսեց սուրբ Գրիգոր Լուսաւորչից Քրիստոսի հրամանն ու գնաց, բարձրացաւ Մասիս սարը: Նա ուզեց, որ Եջմիածնի տաճարի հիմնաքարերը հայոց սարերի թագուհի Սրարատի սրտիցը լինի:


Իւր ձեռքով քաջ Տրդատը փորեց Մասիսի կուրծքը, հանեց նրա միջից ութ հատ ահազին, անտաշ ու անկոփ, ծանր լիռ քարեր ու մի բամբակի թեթև խարարի պէս առաւ շալակն ու ոտով բերեց Վաղարշապատ, նքանցով Եջմիածնի հիմքը դցեց:

Այդ ժամանակ Գրիգորը դեռ աշխարհական էր:

Գնաց, կաթուղիկոս ձեռնադրուեց ու վերադարձաւ, Եփրատ գետում Տրդատին և նրա հետ եկած բաղմութեանը մկրտեց, քրիստոնեայ շինեց: Եկաւ Վաղարշապատ, իւր ձեռքով մեռն օրհնեց. այն մեռնով մեր մայր եկեղեցին օծեց և անունը կնքեց էջմիածին:

Տրդատն էլ իւր պալատի կողքին մի փառաւոր վեհարան շինեց և հայրապետական աթոռը մէջը հաստատեց:

Այն օրից այս օր Եջմիածինը մեր պարծանքն է. մեր հայրապետների աթոռն է:



ԱՄԱՌԱՅԻՆ ԳԻՇԵՐԸ ԳԻՒՂՈՒՄ

Լուսնկալ գիշեր,  
Երկինքը պայծառ.  
Անհամար աստղեր  
Փալում են վառ վառ:

Քնած է ալնտեղ  
Հայի հին գիւղը,  
Մթնած և լուռ է  
Գիւղացու խուզը:

Եւ ժիր գիւղական  
Ընտանիքն ահա  
Սրահում, կալում  
Կամ կտրի վըայ:

Խոնջացած օրուան  
Դառն աշխատանքից,  
Ոտնուծոց արած՝  
Քնած են հանգիստ:

Մէր-մանուկ ալսպէս  
Գրկուած են, քնած.  
Վերելիցն ասես  
Ժպտում է Աստուած:

Միայն աղմկում է  
Այս լռութիւնը  
Գիւղացու սայլի  
Խուլ ճռնչիւնը:

Եւ նրա գլխին  
Կանգնած գիւղացին  
Հօրօվէլ է երգում,  
Հանգիստ է հոգին:



ԵՐԿՈՒ ԸՆԿՐԱՅ ԵՐ

Աշոտն ու Սմբատը անտառ վնացին։ Որտեղից որ էր նրանց առաջը գուրս եկաւ մի արջ։ Աշոտն փախաւ, մի ծառ բարձրացաւ։ Սմբատը մնաց իւր տեղը կանգնած։ Ուրիշ ճար չունէր, վայր ընկաւ գետնին, մեռած ձեացաւ։

Արջը մօտեցաւ, իւր գունչը մեկնեց, սկսեց հոտոտել։ Տեսաւ շունչ չկայ. կարծեց մեռած է, անշունչ դիակ է, թողեց, հեռացաւ։

Աշոտն իսկոյն ծառից ցած եկաւ, հարցրեց Սմբատին. — Եյն ինչ էր փսփսում արջն ականջիդ։

«Արջն ակաջիս այս էր փսփսում. — Վատ ընկեր ունիս. վտանգի ժամին նա իւր ընկերին մենակ է թողնում»։

ԵՐԿՈՒ ԸՆԿՐԱՅ ԱՐՀՈՐԴ

Երկու ճանապարհորդ իրիկնադէմին մի զիւլ հասան։ Հիւրանոց չկար, իջևան նոյնպէս. բայց մեր զիւղացու տունը հիւրի տունն էլ է։ Օտարականը գրսում չի մնալ, ոչ մի բանի նեղութիւն չի քաշիլ։ Մի զիւղացի նրանց իւր տունը տարաւ, լաւ պատուեց, կերակրեց։ Յոդնած ճանապարհորդները շուտ պառկեցին, քնեցին։

Կէս զիշերին աղմօւկ, աղաղակ բարձրացաւ. մարդիկ գոռում են, գոչում, «օգնութիւն» կանչում. եկեղեցու զանգերն էլ կոտրատում են։ Ճանապարհորդները վեր կացան, տեսան՝ ամբողջ շրջակայքը լուսաւորուել է։ Հարեան տունն այրուում էր։

Մէկն շտապով շորերը հագաւ, ուզում էր դուրս գալ, օգնութեան հասնել։ Միւսը նրան բռնեց. — Եւելնը է, եղբայր, տեղդ ծանր կաց։ Առանց մեզ էլ շատ օգնողներ կան. վլուխդ իգուը փորձանքի մէջ մի զցիք։ Քեզ ինչ թէ այդտեղ տուն է այրուում։ հանգիստ քնիր, առաւտը վեր կենանք, մեր ճանապարհը շարունակինք։

— Գութ չկայ քո սրտում, եղբայր, ասաց ընկերը և դուրս թռաւ։

Գնաց, տեսաւ՝ կրակը բռնել է ամբողջ տունը. կրակի հանդէպ մի կին կանգնած՝ մազերն էր փետում, աղիողորմ ձայնով լաց էր լինում, «որդիք», «որդիք» էր կանչում։ Բարի ճանապարհորդը հասկացաւ մօր ցաւը, նետուեց, կրակների մէջ մտաւ։

Կորաւ խեղճը, ասում էին տեսնողները: Բայց նա  
մի բոպէից դուրս եկաւ, դուրս եկաւ, յետևիցն էլ  
տունը վլուեց: Նրա մազերը վառւում էին, վառւում  
էին և շորերը. նա զրկած երկու մանուկ՝ թռչում  
էր դէպի արտասուող կինը: Մարդիկ վրայ թափուե-  
ցան, կրակները հանգցրին, բարի ճանապարհորդին  
ազատեցին: Խեղճ կինը մօտ եկաւ և օրհնելով օ-  
տարականի կեամկը՝ իւր երեխաներին վերցրեց:

---

Տ Խ Ո Ւ Ե Ր Ե Խ Ա Յ

Մի օր փոքրիկ տղան ասաց.  
— Ի՞նչպէս կուզեմ ես, մալրիկ,  
Մտքիս մէջը կարծածիս պէս  
Լինել տղայ երջանիկ:  
Ծիծաղելով ասաց մալրը.  
«Որդիակ, ի՞նչ է քեզ պակաս,  
Ոշխարհքումը կալ ալնպէս բան,  
Որն որ գու չունենաս:  
Հալը ու մալրդ գլխիդ վրան,  
Շորերդ տաք ու մաքուր,  
Փափուկ կողինք, բնակարան,  
Առատ, անուշ կերակուր:  
Նայիր շուրջդ, սիրուն որդի,  
Նատ մարդ ունի քեզ չափ բան,  
Դու չգիտես, որքան աղքատ,  
Տկլոր, քաղցած որբեր կան»:  
— Հէնց այդ է որ, քնքո՛յշ մալրիկ,  
Ինձ չէ տալիս ուրախ օր,  
Որ իմ շուրջը ամեն տղայ  
Ինձ նման չէ բախտաւոր:

---

ՀԱԽ ԲԱՆ Ե ԱՐՀԵՍՏԸ

Մի թագաւոր է եղել, անոնը Լեռն. Գիշերը քնի է, երազ տեսել: Առաւարը կանչել է զիտուն մարդկանց, հարցը ել: Մինն էլ կարացել չի երազի միտքը բացատրել: Թագաւորը ամենին բռնոտել է: Վեզիրներին ասել է. — Մինչև երեք օրը երազս թէ չեք բացատրիլ, պլաներդ կտամ: Թէ բացատրողը տղամարդ լինի, իրան քաշովը ոսկի կտամ. թէ կնիկ լինի, սանամէր կշնեմ, թէ աղջիկ լինի, թագուհու պատիւլ նրան կրաշմեմ:

Հուր են բերել թագաւորին, թէ մի աղջիկ ուզում է քեզ տեսնել: Աղջիկը եկել է, ասել. — Թագաւորին ապրած կենայ, իմ հօրը պնդոցումն ես դրել. այդ նրան արժանի տեղ չի. խնդրում եմ հանես, ես կրացատրեմ քո տեսած երազը:

Թագաւորը աղջկայ խօսրը լսում է: Աղջիկն ասում է. — Այն որ ասում ես, թէ եօթը նիհար հասկ եօթը չաղ հասկ կուլ տուին, դա այն է նըշանակում, որ եօթը տարի սով պէտք է լինի: Իսկ այն որ ասում ես, թէ եօթը չաղ հասկ եօթը նիհար հասկ կուլ տուին, դրա նշանակութիւնն այն է, որ եօթը տարի լիութիւն պէտք է լինի: Էլ այս խեղճերին ինչն ես բռնոտել, պնդոցը դրել:

Թագաւորը բռնոտած մարդկանց աղատում է: Ել երեսը չի տալիս՝ որ խելօք աղջկանը բան ասի, յետոյ է վեզիրին նրա մօտ ուղարկում, ասում, որ գայ, թագուհի դառնայ:

Աղջիկը չի յօժարւում. — Թող թագաւորը չնեղանայ, ասում է, ես նրան կնիկ չեմ դառնալ, քանի որ մի արհեստ, մի չնորք չի իմանում: Այսօր թագաւոր է, կարելի է էկուց խեղճացաւ, ի՞նչ անենք, իմ պահելու պէտք է դառնայ: 2է, ես կամք չեմ տալ, մինչև չփնայ, մի արհեստ չսովորի:

Թագաւորը լսում է ու գնում, գորդ գործելը սովորում: Յետոյ պսակում են: Եօթը լի ու առատ տարիքն անց են կենում, վրայ են համնում սովի տարիքը: Ամենքն էլ սովի պակասութիւն են քաշում: Թագաւորն անդամ հաց չի ունենում. մի քարաւանի ընկեր է դառնում, գնում ցորեն առնելու: Ճատ են գնում, թէ քիչ, այդ Աստուած գիտէ, ճամբին աւաղակներ են դուրս գալիս, թագաւորի և ընկերների առաջը կտրում, եզած չեղածը խլում, յափշտակում, իրանց էլ գերի անում:

Գերիներին վիճակով բաժանում են. թագաւորն ընկենում է մի ուներ աւագակի: Սա խը գերիներին չը նեղացնում. հինգ այն է մի գլուխ ուտացնում էր և խմացնում:

Երկար ժամանակ պարապ նստելուց յետոյ՝ թագաւորն ասում է. — Ես քո գերին եմ, ինչն չես ինձ բանեցնում:

— Ի՞նչ օգուտ, որ բանեցնեմ:

— Ես լաւ արհեստ գիտեմ, մեծ օգուտ կունենաս:

— Ի՞նչ արհեստ:

— Անպէս գորգեր կգործեմ, որ տեսնեո՛ հիանաս, նայելուց չկշտանաս:

— Վահ, դու ալդպէս չնորհք ես ունեցել՝ ես անտեղեակ. դրա համար քեզ ի՞նչ է պէտք, ասա, տամ:

— Բրդի թել տուր և ներկեր:

Աւազակը տալիս է: Թափաւորը գորգեր է գործում, սիրուն, աննման գորգեր: Նկարների մէջ իւր անունը, ազգանունը, տեղը և վիճակն է պատմում: Ով տեսնում է, մ՞նում է հիացած: Մինն էլ է չի հասկանում, որ նկարների մէջ թափաւորն իւր անունը, տեղը, վիճակն է յայտնել: Գորգերը ձեռքից ձեռք ընկնելով, ծախուելով, համնում են թափաւորի քաղաքը: Թագուհին՝ որ աչքը կթած իւր մարդին էր սպասում, հէնց որ գորգը տեսնում է, վրէն գրածը կարդում, իմանում է՝ թէ բանը ինչումն է: Մեծ զօրք է հաւաքում, տղամարդի շոր հազնում, զնում, թափաւորին և միւս զերիներին աղատում:

Աւազակներին էլ թակելով բերում է, նստացնում, արհեստ սովորցնել տալիս ու բաց թողնում:

Ա ն գ ը Ա գ է Տ

Իւր որդուց մալը

Նամակ ստացաւ.

Կարօտած սիրտը

Վեր ու վար եղաւ:

Որդին հեռի էր,

Օտար քաղաքում,

Ծառայում մի տան,

Դպրոցում սովորում:

Նայում է թղթին.

Սիրուն նշաններ.

Բայց այդ գրերի

Մետքը չգիտէր:

Տղան ի՞նչ է գրել,

Պէտք է իմանալ,

Բայց նրա տանն էլ

Կարդացող չկար:

Դուրս եկաւ փողոց,

Մի քարի նստեց,

Գիւղի տէրտէրի

Մոնթին հանդիպեց:

Եւ նրան կանչեց.

«Մարկոսի տղալ,

«Մօտս եկ, ապրես,

«Այս թուղթը կարդա՛»:



ԾՈՒՆՆ ՌԻ ԳԱՅՑԼ

Նախիրն արածում էր Արագածի լանջերին։  
Հովիւը քնած էր։ Ճունն էր նախրի սպահապանը։  
Գայլն այդ տեսաւ, մօտեցաւ շանը, աշխատեց նրա  
սիրտն առնել, խարել, որ ինքը կարողանայ նախրի  
հետ իւր հաշիւը տեսնել։

— Ճիմն եղբայր, դու իմ ցեղիցն ես, իմ ազ-  
գականն ես. կուրանան աչքերս, թէ վատդ ուզեմ։  
Հաւատա, եղբայր, լացս զալիս է, երբ քեզ տես-  
նում եմ, երբ մտածում եմ, թէ ի՞նչ նեղութիւն,  
ի՞նչ ցաւ ես քաշում։ Ի՞նչ է քո օրը, ի՞նչ է քո  
կեանքը, չարշարանք, տանջանք։ Ցերեկ ու գիշեր  
անքուն ես մնում և ուրիշների հոգսն ես քաշում։  
Եղբայր, չես յոդնում։

— Ինչու պիտի յոդնեմ, պատասխանեց շոմը.  
Ես միայն իմ պարտքն եմ կատարում։

— Ճատ լաւ ես անում. բայց չպէտք է օտարին  
ստրուկ դառնալ։ Տեսնում ես, քո տէրը կանաչ խո-  
տերի վրայ առօք փառօք պառկել է և անուշ քնել։

Նախիրը նրանն է, թէ քոնը։ Նա որ քնում է, քեզ  
ինչ. մեղք ես, սիրելիս, աչքդ հեռացրնւ այդ նախ-  
րից և մի փորք էլ քո մասին մտածիր։

— Իմ տէրը քնել է այն յուսով, որ ես արթուն  
կմնամ, կհսկեմ, որ նախրին թշնամի չմօտենայ։  
Նա հաւատում է ինձ, դրա համար էլ ես աչքս  
նախրից հեռացնելու իրաւունք չունիմ։ Ի՞նչ երե-  
սով պիտի տիրոջս երևամ, եթէ քնեմ և թշնամի  
գայ, կենդանիներից մէկին վնասի։

Այդ ասելիս շոմն այնպէս գորգոռաց ու հա-  
չեց, որ հովիւը զարթնեց։ Սա տեսաւ գայլին, դա-  
գանակն առաւ և նրան փախցրեց։

ԵՐԱԿԱՆԻԿ ՄԱՐԴ

Ճանապարհորդը մի շիրիմի մօտ կանգնեց և  
հովուից հարցրեց։ — Ո՞վ է հանդչում այս քարի  
տակ։

— Դա մեր գիւղի բնակիչն է, պատասխանեց  
հովիւը։ Ճատ ժամանակ չէ, որ մեռել է. նրա մա-  
հը ամենքը ողբում են։ Իւր ամբողջ կեանքը նա  
անցրեց ուրիշների համար. որտեղ ցաւ կար, տըխ-  
րութիւն կար, կարօտութիւն կար՝ նա այնտեղ էր։  
Ի՞նչ որ ունէր՝ կարօտեալներին էր տալիս։ Մի ցաւ  
ունէր միայն, որ աղքատ էր, չէր կարողանում հա-  
րիւրաւոր խեղճերի օգնել։ Մեռնելուց քիչ առաջ  
նա հարստացաւ, մեծ ժառանգութիւն ստացաւ։


Այդ ամբողջ հարստութիւնը աղքատներին բաժանեց:  
Բաժանեց, բաժանեց, վերջին կոպէկները մնացին.  
այդ էլ որ բաժանեց, նոյն օրը մեռաւ: Նա մեռաւ,  
բայց նրա անունը միշտ կյիշուի մեր գիւղում:

Գ Ո Ւ Թ

Երեխի փորը շատ, շատ էր քաղցած,  
Հայրը շուկայից չէր վերադարձած.

Հայրը հինգ րոպէ էլի ուշացաւ,  
Երեխի քաղցն աւելի սաստկացաւ.  
Հայրը շուկայում կէս ժամ որ մնաց,  
Երեխին գտաւ սովից թալկացած:


Սպա ինչ անեն խեղճ տղայքն այնուեղ,  
Ուր ամիսներով քաղցած են մնում.  
Որ տեսնես, տղայ, դու հացի երես,  
Այն եղբայրներիդ միշտ միտդ բերես:



Գ Ի Ւ Ղ Ա Ց Ի Ե Ի Զ Ի

Գիւղացին հանդը գուրս եկաւ. զարի էր ցանում: Մատաղ ձին այդ տեսաւ, մաքումը գիւղացուն ծաղրեց, ասաց.—Մրանից աւել էլ ինչ անխելքութիւն. զետինը քանդել է, այնքան զարին ըերել, հողի հետ է խառնում: Դոնէ ինձ տար կամ հաւերին, զուր տեղը գետնին չժափէր:

Եկաւ ամառը. քանդած գետնի վրայ զեղեցիկ արտ բարձրացաւ: Հասկերը զեղնեցին, զլուխները քաշ զցեցին: Գիւղացին մանդաղն առաւ, արտը մըտաւ, հնձեց: Ամբարը լցրեց, ամբողջ տարին ձիուն կերակրեց:



Ա Գ Ռ Ա Հ

Ագռաւը նայեց ու տեսաւ, որ սիրամարդները շատ գեղեցիկ են. վետուրներն այնպէս փայլուն, գոյնզգոյն, ասես թագաւորի ծիրանի լինին:—Ինչու եմ ես այս սև ու յիմար աղռաների շաբքն ընկել, մտածեց նա. արի ես էլ այս սիրուն փետուրներով զարդարուիմ. սիրամարդներն ինձ սիրով կընդունեն, նրանց հետ կնստեմ, վեր կկենամ, աղռաներն ինձ նայելով զարմացած, հիացած կը մնան:

Եւ սիրամարդի սիրուն վետուրներ ճարեց, նրանցով զուգուեց ու զարդարուեց. գնաց, սիրամարդների մէջը մտաւ: Բայց այնտեղ նրան ճանաչեցին. սիրամարդներն վրայ թափուեցին, կոտկուեցին, շինովի վետուրների հետ իսկականներն էլ քանդեցին և իրանց միջից դուրս արին:

Փետուրներից զրկուած, անպատուած աղռաւը գնաց իւր ազգականների մօտ: Բայց սրանք էլ, որ նրան այնպէս մերկ և անարդուած չտեսին, երես զարձրին և շընդունեցին:

Ե Ր Կ Ր Ա Գ Ո Ր Ծ

Արկը շծագած՝ մաճն է քո ձեռքին. եօթ զոյգ եղ, զոմէշ լծած զութանիդ՝ ծրում ես, պատում զու կոշտ ու խոպան լեռներ ու ձորեր, անդ ու անդաստան:

Յանում ես ցորեն, կորեկ ու գարի, հաճար ու վարսակ, բրինձ ու բամբակ: Ծլում են, ծաղկում ճակտիդ քրտինքով քո վարած դաշտեր, որ վ էր փշով:

Մնցնում է գարուն, ոսկեղօծ հասկեր լցնում, ծածկում են քո սիրուն արտեր: Քամին փշում է, արտը տատանում, կարծես նոր հարս է, հօրանց է գնում:

Հասել է ամառ. մանզաղը ձեռիդ հնձում ես, հնձում, խուրձեր կապոտում. խուրձերը բարդ-բարդ սայլով ու ձիով կրում ես, բերում, կալումդ դիզում: Հաշան ես անում, կասում ու քամում, մարուր ցորենը տանդ ամբարում, իսկ չոր դարմանը՝ ձմեռուան պաշար՝ անասնոց համար մարարդ լրցնում:

Եւ երբ փշում է ցրտաշոմնշ ձմեռ, խրճիթում նստած քո խոփին ես սրում. արօր ու զութան սարքում, պատրաստում, և զարնան զալուն նորից սպասում:

Ո՞հ, երկրագնդ, երկրագնդ,  
Քանի սիրուն է քո գործ:

Ա Պ Հ Ի Հ

Աղամ պապն իւր կեանքումն առաջին անգամը տեսած ձմեռուայ ցրտիցն ազատուեց. գարունքուայ կարմրաշաղ արևից նրա մրսած մարմինը տաքացաւ. նրա կեանքի անքաժան ընկերը՝ մեր Եւա տատը դաշտիցը մի փոնչ ծաղիկ ձեռքին՝ ուրախ ուրախ տուն ընկաւ. Աղամի սրտից՝ կարծես մի ծանր բեռը վէր ընկաւ. ծաղիկը ձեռքիցն առաւ, հոտ քաշեց, Աստծուն փառք տուեց ու ասաց.—Թող այս օրուանից սկսած այս ամսի անունը Ապրիլ կոչուի. ևս վախենում էի, թէ ձմեռը մի օր մեղ ցրտահար կանի, կսառցնի, կմեռցնի. բայց հիմի հաւատում եմ, որ այսուհետեւ մենք ցրտից երկիւղ չունիք, կապրինք ու կեանք եքաշենք:

Ապրիլ, իրաւ որ ապրիլ. ինչ դրութեան էին մի քանի օր առաջ աղքատ չքաւորները, ինչպէս են այսօր՝ Ապրիլ ամսին։ Նրանք աշունքուան դառը ըլլրտընքով ձեռք բերած ապրուստի պաշարը ձմեռուայ սկզբին կերել, վերջացրել էին։

Հայը թուրքին, թուրքը հային պատահելիս յանուարին հարցնում էին՝ ալիւր ունիս, փետրուարին հարցնում էին՝ փայտ ունիս. մարտին էլ իրար սիրտ էին տալիս, որ քաջ լինին, մի քանի օր էլ համբերեն։

Գնացին, կորսն ձմեռուան ձիմն ու սառոյցը, ցուրտն ու սառնամանիքը։ Անց կացաւ դիժ Մար-

տը, անց կացան բուքն ու քամիքը՝ եկաւ Ապրիլ, ապրեցրեց ամենիքին։

Կատարեալ ապրելու ամիս է. դաշտը լիճն է տեսակ տեսակ բանջարմերով. փողով չի, գնում են, քաղում, բերում, ուտում։ Ոչխարը ծնել է. գառները դմակները խաղացնելով խոտերի մէջ թռչկոտում են, կաթը ջրից առատ է. ոչխարի մածունը աղքատից խնայել չկայ. հարուստն իւր ձեռքը պակաս հարեւանին կաթնով, մածնով, նոր պամիրով, կարագով լիացնում է։

Աշնանավար ցորենի արտը երկու թիզ քարձրացել, ցնծալով ցնծին է տալիս. նրա կողքին՝ Մարտ ամսումը վարած ու ցանած գարնանավար արտը նոր ծլել է, մտիկ տուղի հողին է փառաւորում։

Ծառերն արդէն ծաղկել են, անուշնոտութիւն են բուրում։ Ծառերի վրայ ծաղկից ծաղիկ ուսկեցին մեղուներ են թռչկոտում. ամեն մի ծաղիկ վրայ մի Աստծու օրհնած աշխատասէր մեղրածանն է նստել։ Նա ծաղիկների քաղցը հիւթիցը մեղ համար մեղը է շինում։ Զմեռուայ ցրտից փախած բոլոր թռչունները օտարութիւնից յետ են եկել։ Դըրանցից մի քանիսը իրանց ըներն են չինում, ոմանք երգում են, ոմանք ձու են ածում, մի քանիսն էլ ածել, պրծել, թուլսս են նստել։

Ծ Ո Յ Հ

Մինչի կէս օր քուն եղար,  
 Քնից յետոյ՝ հաց կերար,  
 Հաց կերար ու կշտացար,  
 Կշտացար ու սլառկեցար.  
 Այսպէս տարիներ կեցար.  
 Ել ինչու գանդատ կանես,  
 Որ ապրուստի հաց չունես:

Մ Ե Ր Պ Ա Պ Ե Ր Ը

Աշխարհիս առաջին գիւղը՝ որ նոյը շինեց,  
 Արկուոփին է, որտեղ նա ուռ կամ վազը տնկեց ու  
 այգի շինեց:

Ապրում էր այդ գիւղը նոյի սերունդներովն  
 ու տնկած վազի արմատով Մասիսի թմբին՝ մինչև  
 1840 թիւը:

1840 թուին մեր Մասիսը բարկացաւ արկու-  
 ուեցոց վրայ, կողքերը շարժ տուեց, իր տակիցը  
 կրակի հետ ահագին քարափներ և հողի, աւազի կի-  
 տուկներ դուրս փչեց, Արկուոփ գիւղի գլխին թա-

փեց ու այդ պատուական գիւղին 300 տուն բռն  
 հայերով հողի տակին ողջ ողջ թաղեց:

Նոյ պատին Արկուոփ գիւղին իւր զաւակներից  
 մի քանիսին ժառանգութիւն տուաւ. ինքը գնաց,  
 Արկուուց երկու օրուայ ճանապարհ հեռու առաջին  
 քաղաքը շինեց, անունը դրեց նախիջևան, այսինքն  
 առաջին իջևանը: Այդ քաղաքը մինչև այսօր էլ կայ  
 և նոյի դրած անունովն է կոչում, հայի լեզուովն  
 է յայտնի ամերող աշխարհին ու ազգերին:

Նոյը սիրեց իւր առաջին իջևանը: Նա թէպէտ  
 իւր նոյեմզար կիսոց հետ Արաքսն անցկացաւ, մի  
 օրուայ ճանապարհ հեռու գնաց, իւր համար մի ու-  
 րիշ տեղ բնակութիւն հաստատեց, բայց երբ որ  
 Աստուած նրա ձեռքիցն առաւ նոյեմզարին, նոյը  
 այստեղի անունը դրեց Մայրանդ կամ Մարանդ—  
 այսինքն այստեղ եմ թողել աշխարհի մօրը—և ին-  
 քը յետ եկաւ նախիջևան ու այստեղ գլուխը գետ-  
 նին դրեց, հանգիստ պառկեց:

Հիմի էլ նոյի սուրբ գերեզմանը նախիջևանցի  
 չայ ու թուլքի համար մուրաղկատար ուխտատեղ է.  
 որ պառաւից կիրակնամտերին հարցնես՝ թէ ինչ  
 տեղից ես գալիս, նա ըեզ կպատասխանի, թէ նոյի  
 տապանի վրայ լոյս վառելու էի գնացել:

Նոյ պատը սիրեց մեր աշխարհը, բայց իւր  
 աշքածակ թոռների մէջ բաժան բաժնութիւն ըն-  
 կաւ. պատի ու տատի յիշատակը սիրողները մնա-  
 ցին՝ որ պատի ու տատի գերեզմանների վրայ

խոնկ ծխեն. իսկ քչով չբաւականացաները, անկուշտ ազքածակները հեռացան, զնացին Բաղդատ. այնտեղ խելքներին զու տուին, բարձր աշտարակն սկսեցին շինել, որ եթէ մի օր Աստուած բարկանայ, միւս անգամ ջրհեղեղ անի, իրանց կարճ խելքովն իբր թէ կարողանան Աստծու բարկութիւնիցն ազատուել. երկինքը բարձրանան, ջրհեղեղիցը փըրկուին:

Աշները դուրս եկաւ. կիսաճանապարհին մուրազները փողներումը ջուր կտրուեց. լեզուները խառնուեց, իրար խօսք չհասկացան: Նրանք ազամախօս լեզուն մոռացան, ազգերի ու լեզուների բաժանուեցին, ու իրարից խռոված խաղընկեր երեխաների պէս մինն աչ զնաց, միւսը ձախ:

Բոլորից խելօք ու երախտադէտը մեր չայկ սկալը դուրս եկաւ: Երգում է չայկը հակառակ է եղել աշտարակը շինելուն: Դրա համար էր, որ Աստուած չայկին սիրեց, նրա լեզուն չփոխեց, իւր տուած լեզուն պահեց: Չայկն էլ միտք բերեց իւր ուստ նոյին, վերցրեց իւր ազգն ու ընտանիքը, յետ դարձաւ, եկաւ մեր աշխարհը. այդտեղ նոյի լեզուով խօսող՝ իրան հասկացողների հետ ապրեց, այդտեղ էլ մեռաւ: Այն օրից մինչև այսօր մեր պապի անունովը մենք մեզ հայ ենք կոչում, և Աստծուց Ազամին, Ազամից նոյին, նոյից չայկին յանձնած լեզուովն ենք խօսում:

Ոհնութ, ոհնութ ֆԱՐՈՒԽ է

Սւկնդի մէջ վառ ընկել,  
Սարի ձիւնը հալ ընկել,  
Զնծաղիկը չալ ընկել.  
Ուխայ, ուխայ գարուն է:  
Քարափնին քրանքել են,  
Ծըլծըլթոցը գցել են,  
Աղբիւր, առու փլխել են.  
Ուխայ, ուխայ գարուն է:  
Զուրն ու հողը տաքացել,  
Մըջիւն, խլէզ դուրս պըծել,  
Դաշտ ու սարեր շաղ անցել.  
Ուխայ, ուխայ գարուն է:  
Գոմի ապրանքը սոված,  
Տզաթեած, լղարած՝  
Հանդ են գնում ուրխացած.  
Ուխայ, ուխայ գարուն է:  
Զիւն ձմեռիցը պըծել,  
Հարս ու աղջիկ հաւաքուել,  
Արևակոխ են արել.  
Ուխայ, ուխայ գարուն է:  
Մարդիկ օդէքը թողում,  
Գուռ ու կտերը նստում,  
Կեռ ու գութան են նորում.  
Ուխայ, ուխայ գարուն է:

ՀԱՐՈՒՍ ԳԻՒՂԱՑԻ


Դիւղում մի չքաւոր ընտանիք էր ապրում, հայր,  
մայր և երկու տղայ: Դրանց ազգականը մեռաւ, մի  
որբ աղջիկ թողեց: Նրանք այդ աղջկանը բերին, ի-  
րանց տանը պահեցին:

Կնիկն ասում էր.—Այ մարդ, Աշխէնին սր  
մեղ մօտ առնենք, մեր վերջին կոպէկն էլ նրա վրայ  
կդնայ. աղի փող էլ չի մնալ, որ աղ գնենք, կե-  
րակրին անենք:

«Ե՞ն, ոչինչ, պատասխանեց մարդը. մենք էլ  
կերակրին առանց աղի կուտենք»:

ԺԱՆՏ ՓՈՒՇԸ

Փշին հարցրին.—Ի՞նչ օգուտ ունիս,  
Որ քարվանի բեռը մօտովդ անցնելիս  
Ո՞չ բուրդ ես հարցնում և ո՞չ էլ բամբակ,  
Քաշում ես, պոկում, բեռը փշացնում»:  
— Օգուտն ի՞նչ կանեմ, պատասխան տուեց  
Անիծած փուշն ու գլուխը ցցեց.  
Օգուտ ուզեցողն օգուտ պիտի տայ,  
Սրտիս ուզելիքն տես ի՞նչ է ահա.—  
Հէնց նրանով է սիրտս հովանում,  
Որ այլոց տունը քանդում եմ, կործանում:



ԽԵԼՕՔ ԳԻՒՂԱՑԻՆ

Դիւղացին նստած կաղնի ծառի տակ՝ հանգըս-  
տանում էր: Նրանից քիչ հեռու հասած դգումն էր  
ցողունից կախուել, գետնի վրայ պառկել: Դիւղա-  
ցին նայեց, այսպէս մտածեց. «Բարակ ցողունն այն  
մեծ դգումին ի՞նչպէս դիմանայ. դգումն այս մեծ  
ծառին պիտի լինէր. իսկ կաղինները ցողունի վրայ  
պիտի բնեին: Ինչպէս սխալ ես զործել, ով Աս-  
տուած»:

Դիւղացին խօսքը նոր էր վերջացրել, ծառիցը  
մի հատ կաղին պոկուեցաւ և թրչուկալով ընկաւ գիւ-  
ղացու խելօք զլսի վրայ:


Գլուխը քորեց մեր իմաստունը և այսպէս խօ-  
սեց. «Մեղայ Քեզ, Աստուած. թէ իմ խելքովը Դու-  
քան բռնէիր, գլուխս հիմի ջարդուած կլինէր»:

Շ Ի Ռ Ա Կ

Ճատ հին ժամանակ երասխի ափին՝ Արմաւեր

Քաղաքում մի իշխան էր կենում՝ անոնը Արամայիս։  
Սա մի որդի ունէր՝ շատակեր և անժիւ որդիների  
հայր, անոնը Շարայ։ Արմաւիրի հայր Շարային  
չէր կշտացնում։ Արամայիսը վեր առաւ, Շարային  
մի դաշտ ուզարկեց, որ Արագածից դէպի հիւսիս  
է ընկնում, բերրի հող ունի, մէկին հարիւր բերք  
է տալիս։ Շարայի անոննովն էլ այդ դաշտը Շիրակ  
ասուեցաւ։

Առաջ եթէ հայ գիւղացիները մի շատակեր  
մարդ տեսնէին, կասէին. «Քո որկորը Շարայինն է,  
մեր ամբարները Շիրակինը շեն»։



Ե Ր Կ Ո Ւ Ա Յ Ժ

Երկու կամակոր այծ իրար պատահեցան մի  
նեղ գերանի վրայ, որ կամուրջ էր ձգած մի գե-  
տակի վրայով։ Երկուսը մի անգամից չէին կարող  
անցնել. պէտք է մէկը յետ կանգնէր և միւսին ճա-  
նապարհ տար։ «Թող ես անցկենամ, ասաց մէկը»։

— Դու յետ կանգնե՞ս, պատասխանեց միւսը։

«Մի քիչ յետ քաշուիր, ասում եմ. առաջ ես  
եմ բարձրացել կամուրջը»։

— Ներողութիւն կանես, ես այնքան յիմար  
չեմ, որ մեծ միրուքովս մի ծծկերի առաջ խոնար-  
հուփմ։

Պրամից յետոյ պինդ ճակատ ճակատի զար-  
կուեցան, եղջիւր եղջիւրի գցեցին և բարակ ոտնե-  
րը գերանին դէմ տալով՝ սկսեցին կռուփլ։ Հակառա-  
կի պէս գերանը թաց էր. երկուսն էլ սայթաքե-  
ցան ու թրմփալով գետակի մէջ ընկան։

Ո Ւ Շ Կ Ա Լ Ծ Ա Ռ Ա Ն

Մէկ եպիսկոպոս մի անփորձ ծառայ ունէր։  
Մի օր քնելիս պատուիրեց նրան զգոյշ կենալ, որ  
ձայն չլինի։

Եպիսկոպոսը քնեց։ Մի քիչ անցկացած ծա-  
ռան տեսաւ, որ չախկ-չուխկ, չախկ-չուխկ մի ձայն  
է զալիս սենեակի մէջ։

«Այս նվ է, տէր Աստուած, մռմռաց ինքն ի-  
րան ծառան ու սկսեց պտռել, որ գտնի սրբազ-  
նին անհանգիստ անողին։ Ման եկաւ ու տեսաւ,  
որ ձայն հանողը պատից կախ արած ժամացոյցն է։

«Չայնդ», գոչեց ծառան ցած ձայնով. բայց  
ժամացոյցը չլսեց նրան։

«Չայնդ կտրիր ասում եմ, հրամայեց նորից  
ծառան։

Ժամացոյցն էլի իւրն էր շարունակում։

Հարացաւ ծառան. պատից ժամացոյցը վայր

բերեց, մի քար վեր առաւ ու տուր թէ կտաս՝  
զարդ ու բուրդ արեց նրան։ Այս անգամ ժամա-  
ցոյցը ձայնը կտրեց։ «Այդպէս հոգիդ կհանեմ ու  
մունչ կփացնեմ հա, ասաց ծառանսիրտը հովացած.  
դիմա հիմա, որտեղ քոնն ասես, այնտեղ էլ իմն ա-  
պիս»։

### ՎԱՀԱԳՆԻ ԾՈՌԻՆԴՀ

Երկինք ու երկիր երկնում էին,  
Երկնում էր և ծովը ծիրանի.  
Ծիրանի ծովը ցաւում էր, երկնում,  
Գոռում, ալիքներ երկինք հաօցնում։  
Ծիրանի ծովից ծուխ էր դուրս գալիս,  
Ծիրանի ծովից բոց էր դուրս գալիս.  
Եւ բոցի միջից խարտեաշ պատանի  
Գուրս վազում, թռչում, ինչպէս աղաւնի.  
Նրա մազերը՝ արեգի ճաճանչներ,  
Նրա միջուքը՝ կրակ ու բոց էր.  
Ծով-ծով աչքերը վառ էին փայլում,  
Ինչպէս արևը բարձր երկնքում։

Վահագն պատերազմել է վիշապների հետ.  
յաղթել է նրանց. երկիրն ազատել է նրանցից։ Դրա  
համար էլ նրան Վիշապաքաղ էին առում։ Էին հայե-  
րը նրան Աստծու տեղ պաշտում էին։ Նրա համար  
մեհեան էր շմուռած Տարօն գաւառի Աշտիշատ  
առանում, Եփրատ գետի վրայ։ Այդ մեհեանը Վա-  
տառանում,

հեվահեան մեհեան կամ սենեակ Վահագնի էր աս-  
ւում։

Վահագնի կիմն էր Աստղիկ դիցուհին։ Աստղիկն  
ամեն զիշեր Վահագնի սենեակն էր գալիս՝ քնելու։  
Վահագնի սենեակը զալուց առաջ Եփրատ գետն էր  
մտնում, լողանում, մաքրում։ Հայ Երիտասարդներն  
այդ ժամանակ բարձր սարերն էին բարձրանում,  
խարոյկ վառում։ Նրանք ուզում էին իրանց աստուա-  
ծունու զեղեցկութիւնը տեսնել։ Աստղիկ դիցուհին  
նեղացաւ, բարկացաւ նրանց վրայ և մի լաւ պատ-  
ժեց. չորս կողմը թանձր մշուշով պատեց, որ ինքը  
բոլորովին շտեսնուի։ Այդ օրից Տարօնի դաշտից  
մշուշն անպակաս է. ուստի և անունը Մշոյ դաշտ  
է մնացել։

### ԲԻՆԳԵՕԼ

Մշից զուրս գանք, Եփրատը կարենք և գէսի  
Էլլորում գնանք. ճանապարհին բարձր սարերի կը  
հանդիպենք։ Մի կոյր աղջիկ իւր եղբօր հետ մի  
անգամ այդ սարերն է գնում։ Սարի վրայ թար-  
թափելով ման է գալիս, մի աղբիւր է գտնում։  
Սառը ջրի վրան է ընկնում, կուշտ խմում, ձեռ-  
ներն ու երեսը լուանում։ Յանկարծ նրա աչքերը  
բացւում են։ Ուրախացած շտապում, իրանց տուն  
է վազում։ Հայրն ու մայրը տեսնում են, զարմա-  
նում։ Հարցնում են.

«Աղջիկ, այդ ինչ արիր, որ աշքերիդ լոյսը բացուեց»:

Պատամանում է.—Սարի գլխին մի աղքիւր կայ. լուացուեցայ, աչքերս բացուեցան:

Գնում են, տեսնում, որ մէկ չէ, հազար աղքիւր կայ: Դրա համար էլ սարի անունը Բինգեօլ են գնում, այսինքն հազար աղքիւր: Քուրգերն էլ թարգմանել, Բինգեօլ են ասում:

### Ս Ի Փ Ա Ն

Մասիս սարի հարաւային ստորոտից մի լեռնադաշտ է ձգւում, երկարում, որ գնում է և Վանայ լճի հիւսիսում Սիփան սարի ոտքերի հետ միանում: Սիփանը մի բարձր սար է, որ ամբողջ տարին ձիւնով է ծածկուած. հարուստ է աղքիւրներով, խոտերով և հազարերանդ ծաղիկներով:

Նոյի տապանը երբ ջրերի երեսին լողալով Սիփանին հասաւ, ասաց.

«Սիփան, առ զիս, առ զիս»:

Սիփանն ասաց.

«Գնա ի Մասիս, գնա ի Մասիս,

«Որ մեծ է քան զիս,

«Որ բարձր է քան զիս»:

Եւ տապանը ջրերի երեսին լողալով գնաց, Մասիսի բարձր գագաթի վրայ նստեց, հանգստացաւ:

Ա Ր Ա Գ Ա Ժ  
Մասիսի դիմացը՝ երասիսից դէպի հիւսիս Արագած սարն է գտնւում: Մասիսը զօր է տուել, դէպի երկինք բարձրացել, իսկ Արագածը գետնի երեսին է փռուել, տարածուել: Մասիսը մերկ է, զուրկ ջրերից ու կանաչից. Արագածը հարուստ խոտերով ու աղքիւրներով պճնուած: Արագածի աղքիւրների մէջ նշանաւոր է Ծփանիս համեղաճաշակ աղքիւրը:

Ամեն առաւօտ՝ էջմիածնի գոմանոցից երկու ջորեապաններ՝ կժերը գրաստներին բարձած՝ իրանք էլ մէջը նստած՝ բարձրանում են Արագածի լանջը և Բիւրական գիւղի գլխից լցնում կժերը Ծփանիսի սառն ջրով, իջնում Բիւրական, աւագ քահանային սափորների բերանը կնքել տալիս և նորից չորս ժամաշափ տարածութիւնը կտրելով, իջնում են Արարատեան դաշտը և կաթուզիկոսական վեհարանի յետի դուռը բաղխում:

Մինչև աւագ շաթիրն իւր աչքով չզննի Բիւրականի աւագ երէցի կնիքը, ոչ ոք իրաւոնք չունի ջորեապաններից կժերն ստանալ:

Երեխ մի ժամանակ ջորեապանների խարդախութիւնը յայտնուել է. անհաւատարիմ ծառաներն իրանց նեղութիւն չտալու համար՝ Արագածի թումբը չեն բարձրացել, դաշտի հասարակ աղքիւրների ջրերն են վեհարան տարել:

Արագածը չորս գլխաւոր գագաթ ունի. այդ գագաթներն այնպէս են, ինչպէս խաչի չորս ծայ-

ըլք: Լուսաւորիչն օրհնեց այդ գաղաթները և նրանց  
մէջ տեղը մի եկեղեցի շինեց: Եկեղեցու մէջ մէր  
կանթեղ վառեց. կանթեղն առանց պարանի կա-  
խուած է այնտեղ. արդարներն են միայն տես-  
նում:

Ե . Ը . Գ .

Բարձր սարին հաւք չի հասնում,

Միայն անուշ հովք է խաղում.

Իսկ այն բարձրում՝ սատղերի հետ

Լուսաւորչայ վառ է կանթեղ.

Մատաղ հոգուդ, սրտոնտ աղբէր,

Այն կանթեղը քեզ թուր ու թե:

Լուսոլ աստղը հէնց դուրս եկաւ,

Սրտոտ տղան ալ ձին հեծաւ.

Զարկեց, քշեց. փախաւ տաք ձին,

Կոռւի գնաց կէս գիշերին:

Երնէկ, աղբէր, քեզ սիրողին,

Ե՞րբ կհասնես քո մուրազին:

ԶՕՐԱՆՈՐ ԽԱՉ

Մէկ շարաթ օր՝ լոյս կիրակին  
Քառասուն հօտաղ ժողովուեցին,  
Գնացին ու դաշտը հասին.

Մի բոլիսի խաչ շինեցին,

Զորս գլուխը խնձորեցին,

Ծնկոյզի թաւով փաթաթեցին,

Ծունկ չողեցին, աղօթք արին,

Լացով Սատուած որ կանչեցին,

Բոլիսի խաչը արծաթ դարձաւ,

Խնձորները ոսկի փայլուն ար

Եւ տերել՝ մետաքս սիրուն:

Համրաւ բերին մեծ քահանին,

Համրաւ՝ գիւղի մեծ իշխանին.

— Այսպէս խաչ կայ դաշտի միջին.

Դա մեծ բախտ է չայոց ազգին.

Բերենք, դնենք մեր տաճարում.

Յերեկը գիւղին նա հով կանի,

Գիշերը լուսով կզարդարի:

Եւ ժողովուրդ ժողովեցին,

Մեծ թափորով դաշտ գնացին.

Առին խաչը, գիւղը բերին

Եւ տաճարում բազմեցրին.

Յերեկն հով էր անում գիւղին,

Գիշերը լոյս տալիս գիւղին:

Ճուն գզիր կար գիւղի միջին՝

Մտած հարիւր յիսուն տարին.

Դա լուր տարաւ քուրդ պարոնին,

Խելքից հանեց անհաւատին.  
 —Մի խաչ եղաւ հայոց ազգին,  
 Լոյս է տալիս մթին ժամին,  
 Հով տարածում օրուայ շոգին.  
 Նա վայել չի չայոց ազգին.  
 Նա արժան է քո պալատին.  
 Գիշերը լոյս դու կտանաս,  
 Ցերեկ շոգից ազատ մնաս:  
 Քուրդ պարոնի խելքը կորաւ,  
 Մատնիշ մարդուն ականջ դրաւ,  
 Նա վեր կացաւ, ճամբեց Ալին,  
 Նրա հետն էլ՝ քուրդ Մահմադին:  
 Գրանք եկին, գիւղը մտին,  
 Հայ իշխանի դուռ կտրեցին.  
 —Ճնոր մեղ այն խաչ, ինչ ձեր բան է,  
 Մեր պարոնին նա վայել է:  
 Իշխանն ասաց.—Խաչը [թողէք,  
 Ոսկի, արծաթ վերցրէք, տարէք.  
 Գիտեմ պարոնն խաչ չի ուզում,  
 Ոսկի, արծաթ է ցանկանում.  
 Խաչն ինչին է քուրդ պարոնին,  
 Դա վայել է հայ քրիստոնէին.  
 Ցեր սոլերի զինն էլ առէք  
 Եւ յետ դարձէք, տուն գնացէք:  
 Ալին, Մահմադ շընդունեցին.  
 «Իրանց կարգով արծաթ, ոսկին.  
 Խաչ են ուզում, խաչը բերէք,  
 Թէ չէ զօրով կառնենք տանենք»:

Եւ գնացին դէպի տաճար.<sup>18</sup>  
 «Խաչ» են բոռում նրանք անդադար.  
 Հայհոյում են, գոռում, գոչում,  
 Հանդիպողի զլսին խփում:  
 Այսպէս դրանք տաճար գնացին,  
 Քացի տուին, գուռ կոտրեցին.  
 Դուռ կոտրեցին սուրբ տաճարի  
 Ծառաները քուրդ պարոնի:  
 Դուռ կոտրեցին և պատժուեցան,  
 Մահմադին, Ալին կատաղեցան.  
 Կատաղեցան, գազան դարձան,  
 Ատամներով իրանց կաշին  
 Կրծոտեցին, կտրտեցին,  
 Արիւնլուայ վայր թափուեցին:  
 Մատնիշ զիերը վեր կացաւ,  
 Քուրդ պարոնին համբաւ տարաւ.  
 —Այն խաչը չէ նրանց կտրտել,  
 Հայոց ազգն է այդպէս արել:  
 Քուրդը խելքովն ընկաւ նրա  
 Եւ փրփրեց Հայոց վրայ.  
 Ելաւ, կանգնեց բերդի զլսին,  
 Չայնեց, կանչեց իւր զօրքերին.  
 —Քաջ զինուեցէք, ճամբանյ ընկէք,  
 Հայոց գիւղը քարքանդ արէք:  
 Դեռ չէր հասել զօրքը գիւղին,  
 Աստծու կրակ թափուեց զլսին.  
 Առջեի կարգերը յետ դարձան,  
 Ցետինների վրայ թափուեցան.

Յետիններն էլ զէնքեր առան,  
 Ահեղ կռիւ սկսուեցաւ:  
 Դիմակներն իրար վրայ են գիգւում,  
 Արեան գետեր դաշտով հոսում.  
 Մի մարդ միայն մնաց կենդան,  
 Որ յետ պարձաւ, պատմեց այդ բան:  
  
 Քուրդ պարոնի բերդը քանդուեց.  
 Կինն ու տղան հիւանդացան,  
 Անդամալոյծ վայր թափուեցան.  
 Ինքը կատղեց իւր սենեակում,  
 Զին էլ կատղեց, ընկաւ գոմում:  
  
 Քուրդ պարօնը կանչեց, ասաց.  
 «Քառասուն կռուան գոմէշ ունիմ,  
 Մատաղ կանեմ չայոց խաչին.  
 «Քառասուն անծին երինչ ունիմ,  
 Մատաղ կանեմ չայոց խաչին.  
 «Քառասուն շիշակ ոչխար ունիմ,  
 Մատաղ կանեմ չայոց խաչին.  
 «Քառասուն սափոր ոսկի ունիմ,  
 Այն էլ մատաղ չայոց խաչին:  
 «Պալատներս կանգուն մնան,  
 «Կինս ու տղաս առողջանան,  
 «Ես ազատուիմ այս փորձանքից,  
 «Զիս էլ պլրծնի իրացաւից:  
  
 Խաչը քուրդի խնդիր չառաւ.  
 Այն չէն բերդը աւեր մնաց,

Կատղած, ընկած պարոնն ուաձին,  
 Անդամալոյծ՝ տղան ուակին: Կերցաւ ընկաւ գղրի բերան,  
 Կերցաւ ընկաւ գղրի բերան,  
 Մատնիչ մարդու այն վատ բերան.  
 Զներ ժողվան, տարան, կերան,  
 Մարդիկն ուրախ օրեր տեսան:

Ոհրիշին չոր ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ՄԷՋԸ  
 ԿԸՆԿՆԻ

Ճատ հին ժամանակ Մասիս սարի մօտ մի  
 թագաւոր էր կենում, անունը Տիգրան: Սա զօրեղ  
 և խելօր մարդ էր: Բոլոր թշնամիներին յաղթել,  
 հալածել էր. իւր երկիրն այնպէս էր զարդարել,  
 հարստացրել, որ ժողովրդի կերածը իւղ էր ու  
 մեղր:

Նրանից ամենքը գողում, սարսափում էին.  
 բայց աւելի մեծ էր Զոհակի վախը: Սա մի չար  
 թագաւոր էր. և ինչպէս բալոր չար մարդիկը՝ խա-  
 ղաղ քուն չունէր: Մի անգամ այս թագաւորը երազ  
 տեսաւ: Մասիս սարի զագաթին նստած էր մի կին:  
 Նա բարձր հասակ ունէր՝ ինչպէս Մասիսի ստորոտի  
 շինարիները. Նրա այտերը վարդի պէս կտրմիր էին.  
 աչքերը՝ ինչպէս զոյգ արեգակներ: Նա գեղեցիկ էր՝  
 ինչպէս արշալոյսը: Նրա շորերը ասես արեի ճառա-  
 գայթներից էին հիւած: Կինը երկունքի մէջ էր. յան-  
 կարծ նա երեք դիւցազն ծնեց: Մէկը մի ահազին

վիշապի վրայ նստած՝ արծուի պէս թռաւ, Զոհակի վրայ յարձակուեցաւ։ Զոհակը խոնկլ էր ծխում, զո՞հ էր մատուցանում իւր կուռքերին։ Դիւցազն ուղում էր Զոհակի կուռքերը ջարդել, կործանել։ Բայց Զոհակը մէջ ընկաւ, չժողոց։ Մէջները սաստիկ կոփս ընկաւ, սրերն ու նիզակները փշրւում, վայր էին թափւում։ Գետինը դողում էր։ Զոհակի պալատը արեան ծով դարձաւ։ Վերջը Զոհակը թռւացաւ և դիւցազնի սաստիկ զարկից վայր ընկաւ։

Սարսափած զարթնեց Զոհակը. քոնը կըտրուեց. կանչեց իւր վեղիրներին, պատմեց երազը, ասաց. — Այդ քաջը, որ ինձ զարկեց, Տիգրան թագաւորն է։ Նա ինձ հանգիստ չի թողնելու։ Նա իմ զահը պիտի կործանի, իմ թագը պիտի խլի, ինձ իւր ոսների տակ պիտի զցի, տրորի։ Ի՞նչ անենք, որ այս վտանգից ազատուենք։

Մտածեցին, մտածեցին, վերջը վճռեցին, որ Զոհակը Տիգրան թագաւորի հետ սէր, բարեկամութիւն հաստատի։ — Ուրիշ հնար չկայ, ասացին, այդպէս պիտի անենք, որ մի օր մեր ձեռքը զցենք, սպանենք։

Զոհակը բեռներ կապեց, շատ գանձ, շատ ընծայ ուղարկեց Տիգրանին, ասաց. — Ի՞նձ տուր քո քոյր Տիգրանուհուն. Նա պէտք է մեր աշխարհի մեծ թագուհին լինի։ Որ ինձ քեզ փեսայ անես, ձեռք ձեռքի կտանք, մեր թշնամիներին սարսափի մէջ կպահենք, էլ ոչ որ չի կարող մեզ վնասել։

Մասսի թագաւորը Զոհակի չար միտքը չեր

իմանում. ասաց. — Ինձ մի փեսայ է պէտք, թող մեր հարեան թագաւորը լինի, ի՞նչ կայ։ Եւ իւր քրոջը՝ Տիգրանուհուն մեծ փառքով, շատ գանձով ու հարստութեամբ Զոհակի համար թագուհի ուղարկեց։

Զոհակը Տիգրանուհուն մեծ պատիւներ տուաւ, զլխաւոր թագուհի նշանակեց։ Ամեն գործ նրա խորհրդովն էր կատարում։ Ամեն կերպ աշխատում էր, որ Տիգրանուհու սիրտն առնի։ Այսպէս մի ժամանակ անց կացաւ, մի օր չար թագաւորը Տիգրանուհուն ասաց. — Գիտե՞ս, քո եղբօր կինը նախանձում է քեզ. Տիգրանն էլ նրա խելքովն է ընկել, ուզում է մի հընարքով ինձ սպանել, որ մեր երկրի վրան էլ իւր կինը թագուհի լինի։ Ես էլ եմ քո եղբօրը սիրում. սիրում եմ այնպէս՝ ինչպէս դու ես սիրում. գեռքեզանից էլ առաւել եմ սիրում։ Բայց չեմ թողնիլ, որ քո փառքից մի մազ էլ պակասի. չեմ թողնիլ, որ նրանք իրանց չար նպատակին հասնեն։ Այժմ դու էլ պէտք է ինձ օգնես. թէ չէ վերջը վատ կը լինի։

Թագուհին խելքը զլխին կնիկ էր. հասկացաւ Զոհակի սրտինը. Քաղցր խօսքերով նրան պատախանեց՝ թէ լաւ, կմտածենք։ Բայց ծածուկ մարդիկ ուղարկեց իւր եղբօր մօտ և յայտնեց նրան Զոհակի միտքը։

Զոհակն էլ մարդ ուղարկեց, Տիգրանին իւր մօտ հրաւիրեց, թէ եկ, մի քանի օր մեզ մօտ մնա, ուրախութիւն անենք, հարկաւոր գործերի մասին խօսենք։ Տիգրանը հասկացել էր Զոհակի միտքը.

պատասխանեց. — Քո սրտինը չատ լաւ կլտեմ. կը գամ, քեզ կտեսնեմ, բայց ոչ թէ քո տանը, այլ պատերազմի դաշտում:

Եւ իւր զօքըն առաւ, չար թագաւորի վրայ  
կնաց: Կոխվ չսկսեց. ասաց.—Քոյրս այն գաղանի  
ձեռքից ազատուի, պայ, յետոլ:

Մի գիշեր՝ երբ չար թագաւորի բանակում ամենքը քնած էին, Տիգրանուհին տղամարդի շորեր հագաւ, զէնքերը կապեց, դռները հանդարտ բաց արաւ, գոմը մտաւ. մի լաւ ձի ընտրեց, հեծաւ և եղթօր բանակը թռաւ: Զոհակն ուշ իմացաւ այդ. թագուհու ետևից մարդիկ ուղարկեց. սրանք դնացին, բայց դարտակ ձեռքով լետ ոտոճան.

Նյդ ժամանակ պատերազմն սկսուեց: Տիգրա-  
նըն իւր նիզակն այնպէս զարկեց Զոհակին, որ նրա  
երկաթի զգեստը ճեղբեց: Նիզակը որ յետ քաշեց,  
անիւաւ թափաւորի թոքերն էլ դուրս եկան:

Հոր փողեց ու խորացրեց, բայց ինքն ընկաւ այն հորի մէջ:

Անօրէնները յանկարծ կործանուեցան.  
իրանց անօրէն գործերի համար սատակե-  
ցին, կորան:




# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ԴԻՒՅԱԶՆԱԿԱՆ ՎԵՊԵՐԻՑ ԵՒ ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

- |   |     |
|---|-----|
| Սասունցի Դաւիթ.—1) Աստծու պահած դառը գայլը  |     |
| տանիլ (8 եր.). 2) Դաւիթին ուղում են սպանել (8 եր.).   |     |
| 3) Դաւիթը հովիւ (17). 4) Մարութայ և Աստուածածնի վանքը (22). 5) Դաւիթ և Կողբաղին (28), 6) Մարամելիքի բարկութիւնը (34), 7) Դաւիթը զինուում է (37),        |     |
| 8) Կաթնաղբեկը (45), 9) Պողպատի սիւնը (46), 10) Մըսրամելիքի զօրքը (49), 11) Դաւիթը հորի մէջ (50), 12) Օդնութիւն (54), 13) Դաւիթ և Մարամելիքի կոխիւ (59). |     |
| 14) Քաջ որորդ . . . . .   | 14  |
| 15) Յարդգող—Պերճ Պոօշեան . . . .  | 42  |
| 16) Առիւծաձև Մհեր . . . ,   | 65  |
| 17) Էջմիածին—Պ. Պոօշեան . . . .   | 68  |
| 18) Մեր սապերը—Պերճ Պոօշեան . . .   | 90  |
| 19) Վահագնի ծնունդը . . . .   | 98  |
| 20) Զօրաւոր Խաչ (ստանաւոր). . . .   | 103 |
| 21) Ուրիշին հոր փորոշը ինքը մէջը կընկնի .   | 107 |
| Բ. ՏԵՂԱՐԿՈՒԱՆ   |     |
| 22) Շիրակ . . . . .   | 95  |
| 23) Բինդէօլ . . . . .   | 99  |
| 24) Սիփան . . . . .   | 100 |
| 25) Արագած—Պ. Պոօշեան (վերջին մասը) .   | 101 |
| Գ. ԲԱՐՈՑԱԿԻԹԱԿԱՆ  |     |
| 26) Զանասէր մանուկը (փոխադր.) . . .   | 3   |
| 27) Ճպուռն և մըջիւնը (փոխ.) . . .   | 6   |
| 28) Հողը, օդը, ջուրը, արեր—Ս. Գիւղաղեան.  | 11  |
| 29) Արջը և մեղուն—Կ. Մէլիք-Շահնաղարեան.   | 16  |
| 30) Արդարի բաժին—Լէօ  | 23  |
| 31) Հինգ հացը և երկու ձուկը (և. Աւետարան).  | 30  |
| 32) Խելօք սարեակը (փոխ.) . . .  | 31  |
| 33) Արագիւ—Պ. Պոօշեան . . . . .   | 32  |
| 34) Զմեռը—Յար. Ճուղութեան . . . . .   | 37  |
| 35) Յիսուսի բժշկութիւնը (և. Աւետարան)   | 44  |
| 36) Ճնճղուկ (թարգմ.) . . . . .  | 48  |
| 37) Ուխտաւոր աղուէս—Վ. Պարսիկ.  | 52  |
| 38) Բարի գործը (փոխադր.) . . . .  | 57  |
| 39) Հասկեր (փոխ.) . . . .   | 63  |
| 40) Երկու խոփ (փոխ.) . . . .  | 64  |

41) Երկու ընկեր (փոխ.) . . . . .	74
42) Երկու ճանապարհորդ (փոխ.) . . . . .	75
43) Լաւ բան է արհեստը—Ա. Քամալեան . . . . .	78
44) Շունն ու գայլը (փոխ.) . . . . .	82
45) Երջանիկ մարդ (թարգմ.) . . . . .	83
46) Գիւղացի և ձի (փոխ.) . . . . .	85
47) Ագռաւ (փոխ.) . . . . .	86
48) Երկրագործ—Կ. Մէլք-Շահնազարեան . . . . .	87
49) Ապրել—Պերճ Պոօշեան . . . . .	88
50) Հարուստ գիւղացի (փոխ.) . . . . .	94
51) Խելօք գիւղացին (փոխ.) . . . . .	95
52) Երկու այծ—Հ. Ղուկասեան . . . . .	96
53) Ուշկալ ծառայ—Հ. Ղուկասեան . . . . .	97
54) Գետ . . . . .	14
55) Մունետիկ . . . . .	10
Ո Տ Ա Ն Ա Ի Ո Բ Ն Ե Բ	
56) Աշուն ,Աղբիւր, հանդէսից) . . . . .	5
57) Գութանի երդ—Յ. Թումանեան . . . . .	7
58) Երդ . . . . .	14
59) Փոքրիկ տղան—Ք. Թաղէոսեան . . . . .	19
60) Հովիւ—Ն. Տ.-Աւետիքեան . . . . .	20
61) Էն ձորի միջում—Գ. Տ.-Աստուածատրեան . . . . .	24
62) Որսորդի երդ—Գ. Բարխուդարեան . . . . .	27
63) Ծովի վրայ—Ք. Թաղէոսեան . . . . .	34
64) Անձրեից առաջ—Ա. Ծատուրեան . . . . .	36 ✓
65) Գեղջուղի երդը—Յ. Ղազարեան . . . . .	47
66) Ազօթք—Գ. Բարխուդարեան . . . . .	53
67) Զիւն—Գամառ-Քաթիպայ . . . . .	56
68) Մեր աստղը—Գամառ-Քաթիպայ . . . . .	58
69) Յոյս—Գամ. -Քաթ.	62
70) Գիշերը գիւղում—Յ. Թումանեան . . . . .	72
71) Տիուր երեխայ—Գամ. Քաթիպայ . . . . .	77
72) Անդրագէտ (փոխ.) . . . . .	81
73) Գութք. Գամ. Քաթք.	84
74) Ծոյլ. Գամ. Քաթ.	90
75) Ուխայ, ուխայ, գարուն է—Ա. Քամալեան . . . . .	94
76) Ժանտ փուշը—Խ. Արովեան . . . . .	94 ✓
77) Երդ—Յ. Կոստանեան . . . . .	102



2013

3937

ՀՀ Ազգային գրադարան



NL0059840

